

# ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

أزمتاك جريدة يومية سياسية وأدبية - المذبة للثورة، إيشا آرويشيان

1500 L.Ո. 75ԳԳ. ՏԱՐԻ, ԹԻԻ 102 (21152) ՀԻՆԳՇԱԲԹԻ, 11 ՅՈՒԼԻՍ 2002 10 ԷՁ

ԿԻՊՐՍԱԿԱՆ ՀԱՐՅ

## ՄԱԿԻ ԱՊԱՅՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՅԱՆՑԱՒՈՐ ԿԸ ՆԿԱՍՏ ԹՈՒՐԲ ԿԻՊՐԱՅԻՆԵՐԸ

ՄԱԿԻ Ապահովութեան Խորհուրդի անդամները յատկապէս թուրք կիպրացիներուն ակնարկած են, ըսելով, որ անոնց պատճառով է, որ կիպրոսի հարցին լուծման համար Յունիսի ժամկետը չէ յարգուած:

Յոյն կիպրացիներն ու թուրք կիպրացիներն Յունիսի վերջը ժամկետ ճշդած էին կղզիին վերամիացման գծով իրագործումի մը համար: Մակայն Յունուարին անոնց միջեւ սկսած բանակցութեանց մէջ գրեթէ յառաջդիմութիւն չէ արձանագրուած:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՊԱՍՏԱՅԻՆ ՆԱԽԱԳԱՀԱՎԱՆ ՊԱՍՏԱՅԻՆ ՄԵՋ

## ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՔ ՊԵՏԵՐԸ ԳՈՒՄԱՐԵՑԻՆ ԺՈՂՈՎ ՄԸ ԵՒ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԲԵՄԸ ՅՈՒՋՈՂ ԵՐԱՏԱՊ ԲՈՒՈՐ ԵՐԳԵՐԸ



Իշխանութեան երեք պետերը երէկ Պապատայի նախագահական պալատին մէջ գումարեցին ժողով մը որուն ընթացքին քննարկեցին լիբանանեան բեմը յուզող հրատապ բոլոր հարցերը: Նախագահ գործ. էմիլ Լահուտ երէկ ընդունեց խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրրիին, ապա անոնց միացաւ վարչապետ Ռաֆիք Հարիրի: Պրրի եւ Հարիրի նախագահ Լահուտի ճաշի հիւրերը եղան, ապա շարունակուեցան խորհրդակցութիւնները:

Քաղաքական շրջանակներէ քաղցրով իրենց տեղեկութիւնները, կարգ մը լրատուական միջոցներ յայտարարած էին, որ ժողովը պիտի քննարկէ տնտեսական վիճակը զարմանելու միջոցառումները, մազուլով քանոյ փոխադրամիջոցներու արդիւնքին յառաջընթացը:

Նոյն աղբիւրներուն համաձայն՝ այս հարցերուն գծով իշխանութեանց պետերու քննարկումները երեւան պիտի գան նախարարաց խորհուրդի ժողովին եւ պետական այլ մարմիններու որոշումներուն ընդմէջէն:

ԹՈՒՐԵՍ

## ԷՃԵՒԹ ԿԸ ՅԱՄԱՌԻ ՊԱՇՏՈՆԻՆ ՎՐԱՅ ՄՆԱԸ

Հակառակ Թուրքիոյ մէջ տիրող քաղաքական սուր տագնապին, վարչապետ Պրէլմէթ Էնեւիթ երէկ հաստատ կը մնար իր պաշտօնէն չհրաժարելու կեցուածքին վրայ:

Էնեւիթ նախագահած է կառավարութեան մէկ նիստին, որ անոր հիւանդութեանն է վեր (Մայիսի սկիզբը) առաջին անգամ ըլլալով Անգարայի կեդրոնական իր գրասենեակին մէջ կը կայացուէր:

Ան աւելի ուշ տեսակցութիւն ունեցած է կառավարական ընկերակցութեան մէջ իր երկու գործակից կուսակցութեանց ղեկավարներուն հետ, որոնք արդէն որդեգրած են կանխահաս ընտրութիւններու գաղափարը:

Թէեւ Էնեւիթ կ'ըսէ, թէ կանխահաս ընտրութիւններու կայացումը կ'ընայ վնասել երկրին «գիւրգիւր» տնտեսութեան, սակայն երէկ կային ցուցանիշեր, թէ ան կ'ընայ տեղի տալ ճնշումներուն եւ ընդունել անոնց կայացումը:

Վարչապետին ժողովներէն որեւէ մէկը յայտարարութիւն չէ կատարած քաղաքական տագնապին մասին, որ իր սուր կը մտահոգէ ելեւմտական շուկաները: Անոնք կը վախնան, որ քաղաքական կացութիւնը կ'ընայ վնասել Միջազգային Դրամական Ֆոնտին գորակցութիւնը վախելով 16 միլիարտ տոլար արժողութեամբ ծրագրին, որ մշակուած էր երկիրը դուրս բերելու համար 2000ին եւ 2001ին հարուածած ելեւմտական երկու տագնապներէ:

Թուրքիա արդէն իսկ Միջազգային Դրամական Ֆոնտին ամենէն աւելի պարտք ունեցող երկիրն է: Անոր ստացած փոխատուութիւնները աւելի եւս տարձրացած էին Նոյեմբեր 2000ի եւ Փետրուար 2001ի տագնապներէն ետք: Անոր պարտքերու բեռը հսկայ է եւ աւելի եւս կ'աւելնայ, որովհետեւ քաղաքական «բաժան» կացութիւնը դրամատնային տոկոսները բարձրացուցած է:

Էնեւիթ հրապարակաւ ոչինչ յայտնած է կառավարական ընկերակցութեան մէջ անոր Ազգայնական Գործի Կուսակցութեան անդամ գործակիցներուն այս շարքաթակիքի քայլերէն ի վեր՝ խորհրդարանը յետս կոչել եւ Նոյեմբերին կանխահաս ընտրութիւններ կայացնել:

Մակայն թերթի մը տրուած հարցազրոյցի մը մէջ, ան առաջին անգամ ըլլալով խոստովանած է, որ

## ԵՐՈՊԱՅԻ ՅԱՅՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵ «ԹՈՒՐԲ - ՅԱՅԱԿԱՆ ՅԱՇՏՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ»Ի ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԸ

Եւրոմիութեան Հայ Դատի Յանձնախումբը կը հարգէ, որ երեսուն կազմակերպութիւններ եւս ստորագրած են «Թուրք - Հայկական Հաշտութեան Յանձնաժողով»ի դէմ միացեալ յայտարարութիւնը, ստորագիր կազմակերպութիւններու թիւը հասցնելով աւելի քան հարիւր տասի, եւրոպական գանազան երկիրներէ՝ Ֆրանսայէն, Յունաստանէն, Գերմանիայէն եւ Իտալիայէն: Յայտարարութիւնը ստորագրած կազմակերպութիւններու կարգին են Հայց Առաջնական եկեղեցին, Հայ կաթողիկէ եկեղեցին, Հայ Աւետարանական եկեղեցին, մշակութային, բարեսիրական, երիտասարդական միութիւններ, դպրոցներ, հետազոտական կեդրոններ:

Նոր կազմակերպութիւններու միացումը համատեղ յայտարարութեան կը կատարուի այն օրերուն, երբ «Թուրք - Հայկական Հաշտութեան Յանձնաժողով»ը ժողով կը գումարէ Թուրքիոյ մէջ, ըսաւ Եւրոմիութեան Հայ Դատի Յանձնախումբի ատենապետ Հիլտա Չոպոյեան:

«Այս յայտարարութեամբ, Եւրոպայի հայերը, որպէս մէկ վաւերական մասնիկը Ցեղասպանութեան զոհերու ժառանգորդներուն, կը դատապարտեն այդ նախաձեռնութիւնը, որ կ'ամրապնդէ Թուրքիոյ ուրացման քաղաքականութիւնը միջազգային սպա»

Շար.՝ Էջ 3

## ԱՎԱՐԿ ԵՒ ՈՉ ՄԻԱՅՆ ԵՐՈՊԱՅԻ ՀԱՅԵՐԸ

Վերի սիւնակներով տրուած լրատուութիւնը կը հաստատէ, որ ամբողջ եւրոպահայութիւնը, իր պանակային յարանաւանութիւններով եւ Եւրոպայի տարածքին գործող հայ հասարակական կազմակերպութիւններով ուժգին կը դատապարտէ «Հայ-Թուրք հաշտութեան յանձնաժողով»ի հանդիպումներու վերականգնումը:

Միևնուրեք ամբողջ օրին դատապարտանքի մեծ ալիքով հակապոլիտիկայի արկածախնդիրներու քաղաքական ծուղակներ քաջային կեդրոններու կողմէ, եւ որ կը միտի հիմնական հարուած հասցնել Հայկական Ցեղասպանութեան միջազգային ճանաչման աշխատանքներուն:

Դատապարտանքի համահայկական ալիքին դիմաց, «Հայ-Թուրք հաշտութեան յանձնաժողով»ի հայ անդամները առկա-խած էին իրենց մասնակցութիւնը բանակցային նիստերէն՝ անորմիջոցով քաջատրոնութիւններ տալով Ցեղասպանութեան հարցին նկատմամբ իրենց թուրք պաշտօնակիցներուն որդեգրած կեցութեանը:

Ինչ փոխուած է այժմ, որ Պոտրուր իրարու քով կը բերէ թուրք եւ հայ ժողովուրդներու հաշտարարները: Ինչու է այս միակողմանի վիճումը: Որո՞ւ կը նպաստէ եւ արտաքին-քաղաքական, եւ ներապագային մակարակներու վրայ արձանագրուող այս աճապարանքն ու արկածախնդրութիւնը:

Բոլոր նախադրեալները, տուեալներն ու առկախում-վերականգնման անտրամաբանական գործընթացը դէպքերուն հետեւողը կը համոզեն, որ յանձնաժողովի հայ անդամները կը գտնուին քաջարժակապէս պատուէր կատարողի դիրքին վրայ, եւ որոնց շարժումներուն կարմիր ու կանաչ լոյսերուն հրահանգիչը սպապագային կեդրոններ են անկասկած:

Վերի սիւնակներով տրուած բողոքագիրի ու դատապարտագիրի լրատուութիւնը կը վերաբերի ամբողջ եւրոպահայութեան: Ըստ էութեան ողջ հայութիւնը կանգնած է բողոքի ու դատապարտանքի այս էությունին ետին, որ բարձրադասակ կը յայտարարէ, որ թուրքին հետ հաշտութեան մտային մարպանքներ կատարելը այս հանգրուանին կը նպաստեն միայն շարդարարին, ցեղասպանին, որ կը շարունակէ ուրանի իր պետութեան գործադրած նախորդ դարու առաջին ցեղասպանութիւնը:

«Ա.»

## ՊԱՍՏԱՅԻՆԵՆՈՎ ԱՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ «ՉԵՐՔԱՍՈ» ԹԵՐԹԻՆ ՆԱԽԱԳԱՀ ՔՈԶԱՐԵԱՆ Կ'ԱՆԴՐԱԴԱՌՆԱՅ ՓԱՐԻԶԵԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐՈՒՆ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան լրագրողներու հետ հանդիպումի մը ընթացքին նախագահ Վաչագան վերջերս պարպէյձան ակալն «Չերքայո» թերթի այն յայտարարութեան, թէ մօտ օրէն Հայաստանի իշխանութիւնները պիտի հրապարակեն

Լեոնային Ղարաբաղի տագնապի լուծման փարիպեան սկզբունքներու «հայկական տարբերակը, ըսաւ, թէ կողմերուն պաշտօնապէս ներկայացուած են տագնապի լուծման «փուլային», «ընդհանուր պետութեան» եւ «փարիպեան սկզբունքներու» վրայ

հիմնուած տարբերակներուն վերաբերող փաստաթուղթեր: «Հայաստանն է, որ կան նաեւ այլ նախագիծեր, սակայն մեկի պաշտօնապէս ներկայացուած են այս երեքը», նշեց նախագահը: Նախագահ Քոչարեան յայտնեց, որ «Չերքայո»-ի մէջ հրապարակուած տեղեկութիւնները միայն մասնապատկարծութիւններ են: «Այս պատկարները գործելու համար կարեւոր է իրարմիջեւ գործելու յարաբերութիւնը»:

## ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ - ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆ



Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ Պապատայի նախագահական պալատին մէջ ժողով մը գումարեց նախագահ Վոր. Էմիլ Լահուտի հետ: Քննարկուեցան նախարարութեան վերաբերող հարցեր, ինչպէս նաեւ լիբանանեան քաղաքական բեմը յուզող վերջին իրադարձութիւնները:

### ՃԱՇԱՐԱՆ ՈՒՍԻ ԷԼ ՍԱՄԱՐ

(ժուրտ Էլ Պալուք, Պապիմեն դէպի Պրումանայի ձամբուն վրայ)

ԳԵՂԱՏԵՍԻԼ ՎԱՅՐ, ԵԱՌԱՋԱՐԴ, ՀԱՆԴԱՐՏ ՄԻՋԱԿԱՅՐ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԹՆՈՒՈՐՏ

- Միշտ առատ եւ թարմ աղանդեր, համադրած ձաշեր, սակ մէկ անձի 8\$: Խմիչքը՝ ըստ ապսպրանքի:
- Հայկական, արաբական եւ եւրոպական երաժշտութիւն:
- Ամեն Շաբաթ երեկոները յատուկ յայտագիր հանրածանօթ երգիչներու եւ նուագախումբի ընկերակցութեամբ եւ մասնակցութեամբ արաբական պարուհի:
- Փոքրերու յատուկ խաղավայր:
- Կը ստանձնենք միութեան կամ եւ անձնական խրախմանքներ յարմար գիծերով:

ՅԱՆՈՒՅՑ՝ 3տոնուկ ճաշացուցակ, 27 տեսակ բաց աղանդեր, բաց խորոված, բաց խմիչք օղի, գարեջուր եւ զովացուցիչ:

Մէկ անձի համար միայն 17\$:

Հեռաձայն. 04 - 808707 ԵՒ 03 - 360667:



### ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ «ԱՄԱԼ»Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Երեկ առաւօտ Պիքֆայայի վանքին մէջ վեհափառ հայրապետը ընդունեց «Ամալ» կուսակցութեան Բաղաքական Դիւանի ներկայացուցիչները:

Սոյն այցելութեան նպատակն էր վեհափառ հայրապետը հրաւիրել «Ամալ» կուսակցութեան կողմէ կազմակերպուած համագումարի բացման նիստին, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ ամիս:

Վեհափառ հայրապետը սիրով ընդունեց հրաւերը եւ խոստացաւ իր ներկայացուցիչը ղրկել:

Այս առիթով նաեւ քննարկուեցան Լիբանանի ներկայ կացութիւնը եւ համայնքներու միջեւ երկխօսութիւնն ու գործակցութիւնը ամրապնդելու անհրաժեշտութիւնը, որպէս երաշխիք Լիբանանի միութեան հպօրացման: «Ամալ»ի ներկայացուցիչները իրենց բարձր գնահատանքը յայտնեցին Լիբանանի հայութեան կարեւոր դերակատարութեան, ինչպէս նաեւ ինչպատ Լիբանանի միջազգային շրջանակներէն ներս վեհափառ հայրապետին կատարած աշխատանքներուն մասին:

### ԵՐԿՐԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԿԱՅՈՒՆ Է

Կ'ԸՍԷ ՍԻՆՈՐԱ

Ելեւմտաքի նախարար Ֆուատ Սինիրա երէկ վստահեցուց, որ երկրին տնտեսական եւ ելեւմտական վիճակը կայուն է, իսկ ազգային գրաձանիչը՝ անխոցելի:

Սինիրա երէկ ընդունեց մամուլի եւ խմբագիրներու սենտիքաներու նախագահներ Մոհամէտ Պալպէքին եւ Մըլիք Բարաձը:

Քարամ յայտնեց, որ Սինիրա ըսած է, թէ Լիբանանի ղեկավարութիւնները յաղթահարելու անսահման կարողութիւն ունին եւ եթէ որեւէ այլ երկիր այսօր աւերուէր, քաղաքներու եւ տարածքներու վերականգնումը ընդ երկրի գոյնը, պիտի չկարենար Լիբանանի պէս կանգուն մնալ:

«Այսուհանդերձ կարելի չէ նոյն ընթացքը շարունակել եւ անհրաժեշտ է կրճատել պետական բացը, պետական պարտքերը եւ պետութեան ծախսերը, միաժամանակ աւելցնելով անոր հասոյթները», աւելցուց ան:

Քարամ ըսաւ, որ Սինիրա հաստատեց ապագեւտականացումը փութացնելու եւ քաղաքական կայունութիւնը ամրապնդելու անհրաժեշտութիւնը, որպէսզի արդիւնաւորութիւն Լիբանանի նուիրատու երկիրներու եւ կազմակերպութիւններու «Փարիզ - 2» ժողովը:

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական երեսփոխանական գրասենեակը կը յայտարարէ, որ Պետական Պաշտօնէնութեան Նորհուրդը ղեկավարներ կ'ընդունի մաքսատուներու վարչութիւնէն ներս գանձաւան պաշտօններու համար, առ այդ թեկնածուներու քննութիւնները մրցանք պիտի կատարէ:

Այս ծիրէն ներս, Ա. կարգի հսկիչի պաշտօնին համար ղեկավարներ կ'ընդունի պայմանագրային եւ Երեւանի 23/7/2002, իսկ քննութիւնները մրցանքը պիտի սկսի 6/8/2002ին. հսկիչի պաշտօնի ղեկավար պայմանագրային է 30/7/2002, իսկ քննութիւնները կը սկսին 21/8/2002ին, իսկ հսկիչի օգնականի համար ղեկավար պայմանագրային է 8/8/2002 եւ քննութիւնը կը սկսի 10/9/2002ին:

Պետական Պաշտօնէնութեան Հարցերու Նորհուրդը ղեկավարներ կ'ընդունի նաեւ Ելեւմտաքի նախարարութիւնէն ներս պաշտօններու համար:

Տուրքերու եւ գանձումներու աւագ հսկիչներու եւ աւագ հաշուապահներու պաշտօններուն համար ղեկավարներ ներկայացնելու պայմանագրային է 30/7/2002, իսկ քննութիւնները մրցանքը կը սկսի 13/8/2002ին. տուրքերու եւ գանձումի հսկիչներու եւ հաշուապահի պաշտօններու համար ղեկավարներու պայմանագրային է 6/8/2002, իսկ քննութիւնը կը սկսի 3/9/2002ին:

Այս պաշտօններուն ղեկավար ընդհանուր պայմաններէն նշենք, որ թեկնածուներ պէտք է լիբանանցի ըլլայ աւելի քան 10 տարիէ ի վեր, իսկ վկայականներու պարտադրանքը կը պահանջուի պաշտօնէնէն սկսեալ վկայականներ:

Յաւելեալ մանրամասնութիւններու համար ղեկավար հայկական երեսփոխանական գրասենեակ, Շահողեան կեդրոն, 2րդ յարկ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԵԱԿ

## ԻՆՉ ԿՐ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐՈՅԵՐԸ

10 Յուլիսի տեղական մամուլի գլխաւոր նիւթերը կը հանդիսանան մալուրով բանող վանքերու եւ միւս պատերու վարորդներուն եւ ներքին ապահովութեան ուժերուն միջեւ եղած բախումները, Մեթնի ընտրութիւններն ներս պաշտօնէնը եւ ճորձ Պուշի արտախախտութիւնները՝ բարեկարգումներու ծիրէն ներս պաշտօնէնը ցնցեցին արձանագրութեան մասին:

«Տիւրք» օրաթերթին առաջին էջի ճակատը կը գրաւէ հետեւեալ խորագիրը. «Կատարութիւնը աղքատներուն արձանագրութեան արձանագրութեան մասին»: «Պայրաք»-ի խմբագրութեան ապահովութեան ուժերու հետ բախումներու ընթացքին 22 անձեր ձերբակալուեցան եւ 16 ինքնաշարժներ գրաւուեցան:

«Լիուա» գրած է, թէ ներքին գործոց նախարարութիւնը պաշտօնէնէն արտաքին գործընթացները խանգարող քայլեր առնելէ. թերթը նշած է, թէ «մալուրով բանող ինքնաշարժներու հարցին հաւանական լուծում մը կրնայ գտնուի վաղը՝ 3 - 5 միլիոն լիբանանեան ոսկիի հատուցման խոստումով»: Թերթերը իրենց առաջին եւ ներքին էջերով մանրամասնօրէն անդրադարձած են պանապան շրջաններու մէջ կազմակերպուած ցոյցերուն, ներքին ապահովութեան ուժերուն հետ բախումներուն, ձերբակալութիւններուն եւ վանքերու գրաւումներուն:

Լիբանանեան մամուլը իր առաջնակարգ լուրերու կարգին լուսարձակի տակ առած է նախագահ Կոր. Էմիլ Լահուտի մասնակցութիւնը Մարոնիներու Լիկայի հիմնադրութեան յիսնամեակին: «Պայրաք» գրած է, թէ «Պքերթի երեկուան հանդիսութիւնը պայմանները բաւարարող քայլեր չեն ձեռնարկուած:

Մեթնի մասնակցութիւնը ընտրութիւններու անդրադարձումով Կատարութիւնէն ներս պաշտօնէնը ցնցեցին արձանագրութեան մասին:

«Քիֆաի Արապի»-ի համաձայն, «Կատարութիւնը իր յայտարարեց. ընտրութիւններէն ետք մրցակցութեան քաջուելով, Միւրա Մըր կորսնցուց բողոքելու իր իրաւունքը»:

Ներքին քաղաքական կեանքին մասին թերթերը լայնօրէն ակնարկած են վարչապետ Հարիրիի Սուրիա այցելութեան, բայց նախագահ Ասատի հետ չհանդիպելուն: «Պայրաք»-ի խմբագրութեան ապահովութեան ուժերու հետ բախումներու ընթացքին 22 անձեր ձերբակալուեցան եւ 16 ինքնաշարժներ գրաւուեցան:

«Սաֆիր» գրած է, թէ ներքին գործոց նախարարութիւնը պաշտօնէնէն արտաքին գործընթացները խանգարող քայլեր առնելէ. թերթը նշած է, թէ «մալուրով բանող ինքնաշարժներու հարցին հաւանական լուծում մը կրնայ գտնուի վաղը՝ 3 - 5 միլիոն լիբանանեան ոսկիի հատուցման խոստումով»:

Թերթերը իրենց առաջին եւ ներքին էջերով մանրամասնօրէն անդրադարձած են պանապան շրջաններու մէջ կազմակերպուած ցոյցերուն, ներքին ապահովութեան ուժերուն հետ բախումներուն, ձերբակալութիւններուն եւ վանքերու գրաւումներուն:

Լիբանանեան մամուլը իր առաջնակարգ լուրերու կարգին լուսարձակի տակ առած է նախագահ Կոր. Էմիլ Լահուտի մասնակցութիւնը Մարոնիներու Լիկայի հիմնադրութեան յիսնամեակին: «Պայրաք» գրած է, թէ «Պքերթի երեկուան հանդիսութիւնը պայմանները բաւարարող քայլեր չեն ձեռնարկուած:

Միջազգային գետնի վրայ, թերթերը գրած են, թէ նախագահ Պուշի զոհուած լինելու յայտնած է պաշտօնէնէն ներս պաշտօնէնը ցնցեցին արձանագրութեան մասին:

«Քիֆաի Արապի»-ի համաձայն, «Կատարութիւնը իր յայտարարեց. ընտրութիւններէն ետք մրցակցութեան քաջուելով, Միւրա Մըր կորսնցուց բողոքելու իր իրաւունքը»:

Ներքին քաղաքական կեանքին մասին թերթերը լայնօրէն ակնարկած են վարչապետ Հարիրիի Սուրիա այցելութեան, բայց նախագահ Ասատի հետ չհանդիպելուն: «Պայրաք»-ի խմբագրութեան ապահովութեան ուժերու հետ բախումներու ընթացքին 22 անձեր ձերբակալուեցան եւ 16 ինքնաշարժներ գրաւուեցան:

Միջազգային գետնի վրայ, թերթերը գրած են, թէ նախագահ Պուշի զոհուած լինելու յայտնած է պաշտօնէնէն ներս պաշտօնէնը ցնցեցին արձանագրութեան մասին:

«Քիֆաի Արապի»-ի համաձայն, «Կատարութիւնը իր յայտարարեց. ընտրութիւններէն ետք մրցակցութեան քաջուելով, Միւրա Մըր կորսնցուց բողոքելու իր իրաւունքը»:

Ներքին քաղաքական կեանքին մասին թերթերը լայնօրէն ակնարկած են վարչապետ Հարիրիի Սուրիա այցելութեան, բայց նախագահ Ասատի հետ չհանդիպելուն: «Պայրաք»-ի խմբագրութեան ապահովութեան ուժերու հետ բախումներու ընթացքին 22 անձեր ձերբակալուեցան եւ 16 ինքնաշարժներ գրաւուեցան:

«Քիֆաի Արապի»-ի համաձայն, «Կատարութիւնը իր յայտարարեց. ընտրութիւններէն ետք մրցակցութեան քաջուելով, Միւրա Մըր կորսնցուց բողոքելու իր իրաւունքը»:

Քի մէջ «Քարաքալա»-ի էլիտին, որուն ընթացքին խուճր մեծ յաջողութեամբ ներկայացուցած է «հասարակ» ու մէկ գիշերները»:

«Նահար» օրաթերթը խոստով էջով անդրադարձած է միջազգային կարմիր խաչի հրապարակած տեղեկագիրին, որուն մէջ ան անդրադարձած է 2002ի ընթացքին տեղի ունեցած աղէտներուն: Ըստ տուեալներուն, այս տարուան ընթացքին արձանագրուած է 40 հազար պոստ, աղէտներու պատճառով վնասներ հասած են 2 միլիարդ անգլիական ֆունտը, տեղի ունեցած են երկրաշարժներ եւ ծովուն ջուրը բարձրացած է: Թերթը գրած է, թէ կը նախատեսուի յաւելեալ աղէտներ ու երկրաշարժներ:

### ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԵԱՆ ՆՅ ՍՐԲԱ ԳՐՈՒԹԵԱՆ...

Շարունակուած 2րդ էջէն

Րու լուծումը, իսկ եթէ հիւանդանոցներու դռները քայ պատճառով փակուին դատարաններուն առջեւ, ապա այդ պաշտօնատարները պիտի ըլլան պատասխանատուն լիկաներու բողոքի եւ ընդվզումի արտաքին-տնտեսական կապերու խորհուրդը:

Ան նաեւ պահանջեց, որ կառավարութիւնը վաղեման ընտրութիւններու պահանջները, թէ ոչ հարցը պիտի վատթարանայ եւ յաւելեալ մարզից-նայ

Պակաս քայլեր պիտի առնէ:

### ՍԵՓԱԿԱՆ ԿԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՌԻՍԻՑԻՉՆԵՐ

Սեփական վարժարաններու ուսուցիչներու սենտիքայի նախագահ Ժորժ Սաստէ երէկ պատերազմութեան մը ընկերակցութեամբ այցելուեց Լիբանանի նախագահ Կոր. Էմիլ Լահուտի մասին: Սաստէ գորակցութիւն յայտնեց սրբազորութիւնը պոլլոքի ենթարկելու որոշումին, մարտիցային օրինակներու վաւերացումը փութացնելու պահանջները:

Սաստէ յայտնեց, որ Պըրի հասկացողութիւնը ցուցաբերած է սեփական վարժարաններու ուսուցիչներուն վերաբերեալ օրինակներու վաւերացումը փութացնելու պահանջները:

### ԷՃԵՒԹ ԿՐ ՅԱՄԱՌԻ...

Շարունակուած Ա. էջէն

Կրնայ պարտադրար ընդունի կայացումը կանխահաս ընտրութիւններու, որոնք վերջ պիտի տան 5 տասնամեակներու վրայ տարածուող քաղաքական իր ասպարէզին:

Րակուութիւնը խախտելով եւ աւելի եւս հաւանական դարձնելով կանխահաս ընտրութիւններու կայացումը, գոր նոյնիսկ վարչապետին գործակիցները կ'ուզեն:

«Ռատիքալ» օրաթերթին համաձայն, մշակուած են ծրագրերը՝ կեդրոնի-ձախ եւ կեդրոնի աջ քաղաքական անձնակազմին թիւներու միտումներու միտումներու մը համար, որուն մաս պիտի կազմեն տնտեսութեան նախարար Քեմալ Տերվիչ, որ որեւէ կուսակցութեան

անդամ չէ, արտաքին գործոց նախարար Իսմայիլ Ճէմ, որ տակաւին կը մնայ էճԵՒԹի կուսակցութեան անդամ, Հիւսամ Թալալի, որ քաղաքական խորհրդակցանք եղած է եւ հրատարակուած էր կառավարութեան ընտրութիւններու մասին: Սաստէ յայտնեց, որ քաղաքական խորհրդակցանքները կ'ընթացան 2002ի մէջ:

### ԵՐՈՊԱՅԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԿՐ ԴԱՏԱՊԱՐՏԵ...

Շարունակուած Ա. էջէն

Րէզին մէջ: Միացեալ յայտարարութիւնը կոչ կ'ընէ ըլլալու զգօն եւ թոյլ չտալու թուրքիոյ խուսափելու Հայոց Ցեղասպանութեան գծով իր պատասխանատուութիւնէն:

«Իրենց առաջին փորձառութիւնէն ետք, «Թուրք - Հայկական Հարաբերութեան Յանձնաժողով»-ի հայ անդամներու մասնակցութիւնը այս հանդիպումին պէտք է վերագրել իրենց անգիտութեան: Կ'ուզենք իրենց ըսել, որ Եւրոպայի հայերը կը ցաւին, որ իրենք այսօր թեթեւօրէն կը մտտեան այսօր լուրջ հարցի մը, եւ թէ իրենք պատասխանատու պիտի նկատուին արդարութեան համար Եւրոպայի մէջ մղուող պայքարին հասցուելիք հարուածին, որպէս հետեւանք իրենց այս վերաբերմունքին», եզրակացուց Հ. Զոյրեան:

**NARRA TRADING & GENERAL SERVICES CO. S.A.R.L.**

ՆԱՐԱ ԹՐԵՅՏԻՆԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ս.Պ.Ը.

(Սեփականատը՝ Վաիտ Մանուկեան)


**ՎԻԵԹՆԱՄԵՆ ԵԹՈՎՊԻԱՅԵՆ ՍՐԻ ԼԱՆՔԱՅԵՆ ԵՒ ՖԻԼԻՓԻՆԵՆ ՍՊԱՍՈՒԲԵՆԵՐՈՒ ԱՊԱՆԿՈՒՄ**

- Անմիջական յանձնում եւ ապահովագրութիւն:
- Մեր նշանաբանը՝ անկեղծութիւն, ապահովութիւն,
- Մասնաւոր գինք, վճարման դիւրութիւն եւ երկար տարիներու փորձառութիւն:

Պառնիք, City Hospital հիւանդանոցի փողոց, «Էլի» Դրամատան շէնք, 4րդ յարկ: Ըեռ. 03/324799, 01/897633 եւ 03/489989

**ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARD ՏՆՏԵԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:











# Կնոջական

## ԱՌՈՂՋԱՊԱՇԱԿԱՆ

### ԻՆՉՊԵՍ ԳԻՄԱԳՐԱՒԵԼ ԱՄՐԱՆ ՏԱՔԸ

Որպեսզի ամրան տա՝ ընդ մեր առօրեան չթու՛նաւորէ, եւ մենք լաւագոյն ձեռքով վայելենք տարուան այս գեղեցիկ եղանակը, հետեւինք կարգ մը թելադրանքներու:

**1**  
**ՍԻԷՍԹ ԸՆԵՆՔ**  
Շարժումը կը տաքընէ, իսկ հանգիստ վիճակը՝ ընդհակառակը: Ահա՛



**Սիւսթ ընենք**  
Լասիկ պատճառ մը, որպէսզի յետմիջօրէին սիւսթ ընենք, այսինքն հանգիստ դիրքով երկարինք, կարդանք կամ քննանք: Հիմնականը կարելի եղածին չափ հանգիստ տանք մեր մկաններուն՝ չտաքնալու համար:

**2**  
**ԲԱՅ ԳՈՅՆԻ ՀԱԳՈՒՍՆԵՐ ԿՐԵՆՔ**  
Ամրան եղանակին խուսափինք մուժ գոյնի հագուստներ կրելէ: Նախընտրաբար հագնինք ճերմակ, դեղին, կապոյտ կամ վարդագոյն հագուստներ: Մուժ գոյնը կը ներծծէ տաքը:

Միւս կողմէ, թող մեր ամառանային հագուստները ըլլան լայն եւ բամպակեայ՝ մեր մարմնին չփակելու եւ զով պահելու համար:

**3**  
**ՔԻՉ ԵՒ ԱՅԼԱԶԱՆ ՈՒՏԵՆՔ**  
Մոմապահութիւն չընենք, բայց ամրան եղանակին վարժուինք օրական ընթացքին քանի մը անգամ, բայց քիչ ուտելով մարսողութիւնը դիւրացնելու համար:

Օրուան իւրաքանչիւր ժամին հետ պտուղ մը կամ հում բանջարեղէն մը ուտել, նախընտրաբար՝

ջրոտ տեսակները: Ուրեմն նախապատուութիւնը տանք սեխին, ձմերուկին, լոլիկին, վարունգին...

**4**  
**ՇՈՒՔԻՆ ՄՆԱՆՔ**  
Մինչեւ ժամը 9:30



Պտուղ ուտենք

10:00 տան պատուհանները լայն բանաք եւ տան օդը փոխենք, ապա փեղկերը գոցենք, որպէսզի զով եւ մաքուր օդը ներսը մնայ եւ արեւը չտաքցնէ տունը: Փեղկերը կրկին բանաք երեկոյան, երբ արեւուն վերջին շողերը հեռացած են արդէն:

**5**  
**ՍԱՍԱՍ ԹԵՅ ԽՄԵՆՔ**  
Սառած, պաղ թէյը վայրկեանական զովացնելու յատկութիւնը ունի եւ անոր ազդեցութիւնը քանի մը ժամ կը տեւէ:

Թելադրելի է թէյին աւելցնել անանուխի քանի մը տերեւ:

**6**  
**ԳԱՂՋ ՋՈՒՐՈՎ ԼՈՂԱՆՔ**  
Օրուան ընթացքին յաճախ զովանաք մեր մարմնին ջերմաստիճանէն 5 աստիճան պակաս ջուրով լողանքներ առնելով:

Կրնանք նաեւ պաղ տուչով զովացնել մեր սրունքները, ծունկերը, արմուկներն ու թեւերը, ինչպէս նաեւ... ծոծրակը:

**7**  
**ՄԵՐ ՇՈՒՐՁԸ ԽՈՆԱՒ ՊԱՆԵՆՔ**  
Եթէ պարտէզ ունինք, ժամը 10:00էն առաջ ջրները գոյն: Ցնցողով զովացնենք տան բոյսերը, յատկապէս՝ տերեւները: Տաք օդին պատճառով շոգիացած ջուրը խոնաւ եւ զով պիտի պահէ տունը, ինչպէս նաեւ՝ պարտէզին մօտակայ բակը:

Նոյն գործողութիւնը կրկին երեկոյան, այս անգամ՝ օրուան ընթացքին կուտակուած տաքը չէզոքացնելու համար:

**8**  
**ՅԱՃԱՆ ՋՈՒՐ ԽՄԵՆՔ**  
Ջովանալու միջոց մըն է նաեւ պաղ ջուր խմելը: սակայն ճշդ ենք որ պաղ չի նշանակեր սառած:

Օրուան ընթացքին կրնանք մեր մորթը գոփացնել ջուրի սփրէյներով: Պայման չէ շոկային գնել զանոնք: Կրնանք բոյսերը ջրելու ծառայող փոքրիկ ջրմուղ մը պնել, մէջը պաղ ջուր լեցնել եւ յաճախ մեր դէմքն ու անդամները զովացնել անով:

## ՓՈՐՁ - ՇԱՐՅԱՐԱՆ

### ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԸՆԹԱՑՔԻՆ ԻՆՉՊԵՍԻՒՐ ԱՆՁ ՄԸՆ ԷՔ

Կազմակերպուած շրջապտոյտի մը ընթացքին կամ բարեկամներու հետ ինչ ընթացք կ'ունենաք, ինչպէս կը վարուիք եւ կը հակազդէք, ձեր շուրջինները կը համակրին՝ ձեզի, թէ ընդհակառակը, անհաճոյ կը գտնեն ձեր ընկերակցութիւնը:

Իմանալու համար պատասխանեցէ՛ք վարի 15 հարցումներուն, ապա կարդացէ՛ք արդիւնքը:

**- 1 -**  
Շարժաւորը մը լրիւ ձեզի հետ անցընելէ ետք ձեր բարեկամները ձեր մասին կ'ըսեն:  
ա.- Համակերպող անձ մըն էք, ձեզի հետ ապրիլը դիւրին է:  
բ.- Տեսարար նորութիւն կը փնտռէք, յաճախ գանգատող էք:  
գ.- Ձեզ գոհացնելը անկարելի է:

**- 2 -**  
Ձեր նախաձեռնութիւնը մը ետք պատրաստ էք:  
ա.- Երկարելու եւ գիրք կարդալու:  
բ.- Գնումի երթալու:  
գ.- Բաղաքին ծանօթանալու:

**- 3 -**  
Խմբային պտոյտ մը կ'առաջարկուի, կը մտածէք:  
ա.- Լաւ է, կը զարգանանք:  
բ.- Լաւ է, կը զբաղինք:  
գ.- Որքան պիտի յոգնինք:

**- 4 -**  
Մովափին բոլորը կը հեռանան եւ քանի մը վարկեան առանձին կը մնաք, կը մտածէք:  
ա.- Ո՛ր մնացին, ինչո՞ւ ուշացան:  
բ.- Կարծես դրախտին մէջ եմ:  
գ.- Վերջապէ՛ս առանձին մնացի:

**- 5 -**  
Հանրաշարժին մէջ ձեր քովը նստող սխտոր կը բուրդէ:  
ա.- Բարձրաձայն կը քննադատէ՞ դժգոհելով:  
բ.- Կը մտածէք արձակուրդ է, քիչ մը ներողամիտ ըլլամ:  
գ.- Պատուհանէն դուրս կը հանէք ձեր գլուխը:

**- 6 -**  
Խումբով գիշերային վայր մը կ'այցելէք, կը պատմէք ու կը խօսիք:  
ա.- Ձեր ճամբորդութեան մասին:  
բ.- Ձեր կեանքին մասին:  
գ.- Բաղաքականութեան մասին:

**- 7 -**  
Ճամբորդութեան ընթացքին ձեր խումբին մաս կը կազմեն տարբեր ազգի, կրօնի եւ ցեղի մարդիկ:  
ա.- Անտարբեր էք անոնց հանդէպ:  
բ.- Հաճելի կը գտնէք այս այլազանութիւնը:  
գ.- Ձէք հանդուրժեք գանոնք:

**- 8 -**  
Կազմակերպուած շրջապտոյտին ճաշերը չէք հաւնիր:  
ա.- Պատասխանատուին կը յայտնէք ձեր դժգոհութիւնը:  
բ.- Ժիգ մը կ'ընէք վարժուելու եւ ուտելու:  
գ.- Անօթի կը մնաք:

**- 9 -**  
Ճաշարանին մէջ սպասարկողը լեցուն պնակը կը դարձնէ ձեր հագուստին վրայ:  
ա.- Ձայրացած կը պահանջէք, որ ներողութիւն խնդրէ:  
բ.- Ներողամիտ ժպիտ մը կը գծագրուի ձեր դէմքին վրայ:  
գ.- Ձեր քիթին տակէն կը տրտնջաք:

**- 10 -**  
Արձակուրդի ընթացքին երիտասարդ մը կը հաւնիք, գինք հմայելու համար:  
ա.- Ձուարճալի դրուագներ կը պատմէք:  
բ.- Լուրջ հարցերու մասին կը զրուցէք:  
գ.- Հետը կը պարէք:

**- 11 -**  
Ձեր ընկերակցութեամբ ձեր բարեկամները կ'ապրին:  
ա.- Չնախատեսուած պահեր:  
բ.- Անմոռանալի պահեր:  
գ.- Ձուարճալի պահեր:

**- 12 -**  
Եթէ ձեզի հետ ճամբորդող անձերէն մէկը գլխարկը կորսնցուցած է:  
ա.- Անմիջապէս ձեր երկրորդ գլխարկը կը տաք անոր:  
բ.- Չլսել կը ձեռնացնէք:  
գ.- Կը քննադատէք անոր ցրուածութիւնը:

**- 13 -**  
Երբ բարեկամ մը ձեզմէ դրամ ուզէ, դուք ձեզի կը

կարծէք:  
ա.- Պրունէյի իշխանը:  
բ.- Մայր Թերեզան:  
գ.- Դրամատան մը տնօրէնը:

**- 14 -**  
Երբ արձակուրդ կը ծրագրէք, կը փափաքէք ըլլալ:  
ա.- Առանձին՝ ձեր ընտանիքին հետ:  
բ.- Բարեկամներով շրջապտուած:  
գ.- Բոլորովին առանձին:

**- 15 -**  
Արձակուրդը ամէն բանէ առաջ:  
ա.- Հոգեբը մէկ կողմ ձգելու առիթ է:  
բ.- Նոր մարդոց ծանօթանալու առիթ է:  
գ.- Կեանքը վայելելու առիթ է:

## ԱՐԴԻՒՆՔ

● Եթէ 32 - 45 կէտ հաւաքեցիք, մնայուն եւ յաւիտեական դժգոհ մըն էք: Կ'ուզէք գնումի երթալ, երբ մնացեալները պտոյտ կը ծրագրեն. կը մերժէք ուտել, երբ ճաշը ձեր ճաշակին է: Որեւէ անակընկալ կամ չնախատեսուած ծրագիր կը նեղացնէ ձեզ: Կ'ուզէք, որ տեսարար նկատի առնուի ձեր նուազագոյն փափաքը, այլապէս քէն կը պահէք, կը բողոքէք: Ձեր շուրջինները չեն ախորժիր ձեր ներկայութեան եւ փախուստ կու տան ձեզմէ, քանի որ ձեզմը քան ձեր մնայուն դժգոհութեան:

Աւելի նկուս եւ համակերպող եղէք, որպէսզի չբուճակուիք ոչ ձեր, ոչ ալ շուրջիններուն արձակուրդը:  
● Եթէ 18 - 31 կէտ հաւաքեցիք, շատ լաւ խմբապետ կրնաք ըլլալ եւ բոլորը առաջնորդել: Զօրաւոր երեւակայութիւն ունիք, խաղաղապետ եւ ախորժիր ձեր ներկայութեան: Մտ դիրքին է ձեզի հետ յարաբերիլը, քանի որ ուղղամիտ էք, անկեղծ եւ ընկերակցական:

Երբեք չէք ախորժիր առանձնութեան, բարեբախտաբար ձեր շրջապտու երբեք չի ձեռնարկած ձեզմէ, եւ տեսարար բարեկամներով շրջապտուած կը մնաք:  
● Եթէ 15 - 17 կէտ հաւաքեցիք, գոհուող, աշխատասեր եւ ծառայատէր անձ մըն էք. արձակուրդի ընթացքին միշտ պատրաստ էք ձեզմը քան ձեր շուրջինները: Մտ դիրքին է ձեզի հետ յարաբերիլը, քանի որ ուղղամիտ եւ անկեղծ եւ ընկերակցական:

## ԱՅԼԱԶԱՆ

### ԱՇԽԱՐՀԻ 10 ՄԵԾԱՀԱՐՈՒՍՏ ԿԻՆԵՐԸ

Եկէ՛ք ծանօթանալ 2001-2002 տարեշրջանի աշխարհի 10 ամէնէն հարուստ կիներուն: Շատերու անունները լսած էք անկասկած, բայց արդեօք գաղափար մը ունի՞ք անոնց հարստութեան մասին:

Աշխարհի 10 ամէնէն հարուստ կիներու պարագլուխի դիրքը կը գրաւէ ամերիկացի Հելըն Ուալթոն, 82 տարեկան: Անոր հարստութիւնը 20,4 միլիարդ տոլար է, որ ժառանգած է իր ամուսինէն:

74 տարեկան գերմանուհի Ենհաննա Բուսնտ, որ BMW-ի ժառանգորդներէն մէկն է, երկրորդ կը հանդիսանայ 18,4 միլիարդ տոլարով:


Ֆրանսացի 70ամեայ Լիլիան Պեթանքուր, որ «Լ'Օրեալ» ընկերութեան հիմնադիրն աղբիկն է, երրորդ կը հանդիսանայ 14,9 միլիարդ տոլարով:

Չորրորդ կը հանդիսանայ 80ամեայ Անն Բոքս Չամպլըրը 10,1 միլիարդ տոլարով: Անոր հարստութեան կայսրութիւնը կ'ընդգրկէ 17 օրաթերթ, արքանեակային դրուածութիւններ, ձայնասփիւռի եւ հեռուստոյի կայաններ...

Շարք՝ էջ 10

## ԽՈՒՆԱԳԻՐ

### ԿԱՆԱՉ ԹԵՅՈՎ ԿԱՐԿԱՆԳԱԿ



- Բաղադրութիւն 6 անձի համար.  
 ♦ 250 կրամ շաքար  
 ♦ 3 հաւկիթ  
 ♦ 125 կրամ թարմ սեր  
 ♦ Մուրճի դգալ մը «պէրքիցկ փառուրը»  
 ♦ 200 կրամ կակուղ կարագ  
 ♦ 250 կրամ ալիւր  
 ♦ 75 կրամ կանաչ թէյ (փոշի)

Պատրաստութիւն.  
 Երկարական գործիքով զարնել շաքարն ու կարագը: Մէկիկ - մէկիկ աւելցնել հաւկիթները, ապա՝ թարմ սերը:  
 Ուրիշ ամանի մը մէջ խառնել ալիւրը, կանաչ թէյը եւ «պէրքիցկ փառուրը», ապա աւելցնել հաւկիթով խառնուրդին վրայ եւ փայտեայ դգալով մը շարունակել խառնելը:  
 Կարկանդակի կաղապարի մը յատակը իւղել, լեցընել խառնուրդը եւ 10 վայրկեան եփել 350 ջերմաստիճանով փուռի մէջ, ապա 45 վայրկեան ալ՝ 300 ջերմաստիճանով:

Պատրաստեց՝ ՇՈՒՐՁԻ ՄԱՒԻՍԱԳԱՆԵԱՆ

### ԱՄԱՌՆԱՅԻՆ ...

Շարունակուած՝ 6րդ էջէն

Ընթրիք՝ խորոված պատրաստուած աղցան կամ կանաչեղէնով պատրաստուած աղցան, 1 հատ չոր հաց:

Վեցերորդ օր՝ Նախաճաշ՝ սուրճ կամ թէյ եւ կէս կրիֆոն, ճաշ՝ պղպեղ կամ տաք հաւ, լոլիկով եւ հազապտուղի խառնուրդ, մէկ գաւաթ սուրճ: Ընթրիք՝ խաչած հաւ՝ առանց մաշկի, լոլիկով եւ հազարով

Եօթներորդ օր՝ Նախաճաշ՝ սուրճ կամ թէյ եւ կէս կրիֆոն, ճաշ՝ պղպեղ կամ տաք հաւ, լոլիկով եւ հազապտուղի խառնուրդ, մէկ գաւաթ սուրճ: Ընթրիք՝ խաչած հաւ՝ առանց մաշկի, լոլիկով եւ հազարով

### ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուսի սակարանին մէջ օտար դրամահիշներու փակման սակագները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթուկի	31,50 - 33,50	լ.ն.
Իրաքեան տինար	50,00 - 51,00	լ.ն.
Պահրէյնեան տինար	3996,00 - 4000,00	լ.ն.
Քուեյթեան տինար	4953,42 - 4957,42	լ.ն.
Յորդանանեան տինար	2124,42 - 2128,42	լ.ն.
Ա.Մ. Էմիրութեան տինար	408,43 - 412,42	լ.ն.
Սէուտական ռիալ	399,90 - 403,99	լ.ն.
Օմանեան ռիալ	3900,00 - 3930,00	լ.ն.
Քաթարեան ռիալ	412,15 - 416,15	լ.ն.
Եգիպտական կիւնէ	321,72 - 325,72	լ.ն.
Անգլիական սթերլին	2322,70 - 2326,11	լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1010,35 - 1014,52	լ.ն.
Թրքական լիրա	3,62 - 3,64	լ.ն.
Կիպրական փաուստ	2577,85 - 2581,17	լ.ն.
Ճափոնական հայպար եէն	12,42 - 12,46	լ.ն.
Ափրիկեան հայպար ֆրանք	2450 - 2451	լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00	լ.ն.
Քանադական տոլար	990,40 - 994,85	լ.ն.
Աւստրալիական տոլար	850,85 - 854,70	լ.ն.
Եւրո	1492,95 - 1494,16	լ.ն.

● ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	115,000 - 125,000	լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	107,000 - 117,000	լ.ն.
Օմանեան մէկ ոսկի	94,500 - 104,500	լ.ն.
Մեքսիկական փէսոս	562,000 - 582,000	լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոլ ոսկի	15,000,000 - 15,500,000	լ.ն.
Մէկ օսն ոսկի	311,68 - 313,72	\$
Մէկ օսն արծաթ	4,95 - 4,99	\$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրո	0.9916
Քանադական տոլար	1.517
Չուիցերիական ֆրանք	1.4837
Ճափոնական եէն	117.75
Մէկ սթերլին	1.5493

### ՍՈՒԽՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ ԳԻՃԻ Ա. ՃՂՂՈՒՄ ԳԻՃԻ Բ. ՃՂՂՈՒՄ

Ա. կարգի	4 2/8	4 2/8
Բ. կարգի	4 3/8	4 3/8
Քաճճեթուղթ		

### ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5192 Պատրաստեց՝ Տ.Մ. ԱՂԱՋԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

<b>ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ</b>	<b>ՈՒՂԱՇԱՅԵԱՆ</b>
1. Յատկորէն, բացալայտ կերպով:	1. Եղջերուի տեսակ - Բնակուած վայրեր:
2. Ճարակատեղի - Քակոր, անատունի թրիք:	2. Հայաստանի լեռներէն - Կիլիկեան քաղաք:
3. Օտար երգչուհի - Շաղկապ:	3. Որթատունկի կտրուած ճիւղ - Գրաշարի հարթիք:
4. Հոլովակերտ մասնիկ - Ճաղատ:	4. Պոչ - Ճափոնական օդանաւային ընկերութիւն մը:
5. Այրուբենէն - Յուցական ածական - Կողով:	5. Ափրիկեան ոստան:
6. Կայտարական հրովարտակ - Տարիք:	6. Հայկական ամիսներու 17րդ օրը - Արական անուն:
7. Կին - Մառի կոճղ:	7. Նոյն գիրերը - Թանկարժէք մետաղ - Բնակարանի (հակ.):
8. Ամերիկեան երկիր (հակ.) - Ետին դարձած տղամարդ:	8. Արական օտար անուն - Սուտանի լիճերէն:
9. Հանդերձարան - Ատոմ Եարճանեանի ծննդավայրը:	9. Գաղտասեր բոյս - Հոլանտայի ֆուտբոլի կազմերէն:
10. Ջերմուկներ գտնող իշապանը - Նեղ բացուածք:	10. Աղանիի տեսակ:
11. Մանուկներու խումբ - Կարծր փայտով մշտադալար թուփ:	11. Մեկուսում - Ոխ - Ապակեանութիւն:

**ԹԻՒ 5191**

**ԽԱՉԲԱՌԻՆ**

**ԼՈՒԹՈՒՄԸ**

1	Մ	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
2	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
3	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
4	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
5	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
6	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
7	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
8	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
9	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
10	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
11	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս

### Ն Ա Մ Ա Կ Ա Ն Ի

Շարունակուած՝ 5րդ էջէն

Մտահոգ ենք, որովհետեւ իբրեւ ծնողք որեւէ հաւատարմ չունինք, որ առնուած քայլերով պատասխանատուները մինչեւ 3, 5 կամ 7 տարի լուծումներ կրնան գտնել հայկական վարժարաններու տագնապներուն: Աշակերտութեան քիւի անկումին հակասակ կը յաջորդեն կրթական մարկարդակի լուրջ անկումը, փորձառու ուսուցիչներու հեռացումը եւ, ամէնէն կարեւորը, մանկավարժական ու դաստիարակչական պակասուոր խնամքը մեր գաւազներուն:

Մտահոգ ենք, սակայն մեր մտահոգութիւնները լսող ականջներ կա՞նք, թէ ոչ... ձայն բարբառոյ յանգալով: Լուսինը լուծում չէ, անկալ յաւելելով տագնապ ու մտահոգութիւն կը յառաջացնէ: Պետք է խօսիլ, գրել եւ ծնողները լուսաբանել: Ձայն բազմած ձայնն Աստուծոյ: Պետք է շարժիլ ամէն ուղղութեամբ, որքան արագ՝ այնքան լաւ, որովհետեւ ծնողներու համբերութիւնը ամիսներով ամսական չառնող ուսուցիչներուն չափ երկար չէ: Վաղը կրնայ ուշ ըլլալ:

### Ա. ՎԱՐԴԱՆԵԱՆ ԵՒ... Շարունակուած՝ 5րդ էջէն

Այս հարցով Մ. Մաթեոսեան վկայեց ըսելով, որ իր անձնական ընկալիչ հեռաձայնով տեղի ունեցած է Ն. Յունանեանի եւ Հ. Մարգարեանի խօսակցութիւնը՝ դիտել ապով, որ դժուար էր կանխատեսել հետեւեանքներ, եթէ չկատարէին անարեւելի հրահանգը եւ չհեռաձայնէին Հ. Մարգարեանի:

Դատաւարութեան ընթացքին Ա. Վարդանեանի պաշտպան փաստաբանն էր Բուրբէն Սահակեան: Այն հարցումին, թէ ի՞նչ հիմամբ Ա. Վարդանեան ունի պաշտպան փաստաբան (ան միակն է, որ շահերը պաշտպանող փաստաբան ունի), Ա. Վարդանեան ըսաւ, որ այդ մէկը իր՝ տուժողի իրաւունքն է, եւ թէ զինք կը յուսէր դատաւարութիւնը, դատաւարութեան ընթացքը եւ այդ պատճառով ալ ինք վարձած է փաստաբան:

### ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԹԱԼԻՆ ՄԻԶԱՅԼԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Յուլիս 2002, Աճառի լիստի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ա. պատարագի:

### ☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ **ԽՈՅ** (21 Մարտէն 20 Ապրիլ)

Այսօր պիտի ունենաք անհաւատալի եռանդ եւ ուժ: Ձեր մերձաւորները եւ հարազատները պիտի հիանան ձեր աշխուժ գործունեութեան:

☆ **ՅՈՒՆ** (21 Ապրիլէն 21 Մայիս)

Մեյամադոտ եք այսօր ու երազկոտ, սակայն կ'ուզէք դուրս գալ ալ լիճակէն, հետեւաբար գացէք ձեր սիրած բարեկամներուն մօտ եւ գուարճացէք:

☆ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս)

Ձեր դրացիներուն կամ բարեկամներուն մօտեցէք, անոնց հետ զուարթ պահեր ստեղծեցէք թեթեւ կերպով: Գուրջ նախաձեռնեցէք այս հանդիպումին եւ գոհ պիտի մնաք:

☆ **ԽԵՅԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)

Այսօր պիտի կատարէք կարգ մը ազատ շարժումներ, քիչ մը պիտի ծախսէք ձեր հաճոյքին համար, որովհետեւ ձեր եկամուտը աւելցած է այս օրերուն:

☆ **ԱՌԻՒԾ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս)

Ձեր գործերը պիտի ընթանան ըստ ձեր փափաքին, ու ասիկա՝ առանց մասնաւոր հիգի: Ուշադիր եղէք ձեր շուրջի անցուղաբերուն: Բարեկամութիւն հաստատեցէք ձեր մօտեցողներուն հետ:

☆ **ԿՈՅՍ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Ձեր ուժերը մի՛ գերազանհատք. հանգիստի ժամանակ տրամադրեցէք, որպէսզի մինչեւ վերջին ծայր չսպառի ձեր դիմադրականութիւնը: Օգտուեցէք հանգիստի ժամերէն:

☆ **ԿՇԻՌՔ** (Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Բարեկամ մը հասկացողութիւն չի ցուցաբերեր ձեր հարցերուն նկատմամբ, ու ասիկա ցաւ կը պատճառէ ձեզի: Երկխօսութեամբ գիրք հասկցէք:

☆ **ԿՐԻՒՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Արձակուրդի մեկնած ձեր պաշտօնակիցներուն պարտականութիւնները պիտի կատարէք մասամբ: Թեւեւ քիչ մը պիտի յոգնեք, բայց օր մըն ալ անոնք պիտի օգնեն ձեզի միեւնոյն ձեզով:

☆ **ԱՂԵՂՆԱՒՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Պիտի հետեւողք նոր պրպտումներու ձեր գիտելիքները գարգացնելու: Նոր վարժութիւններով պիտի կարենաք զօրացնել ձեր գիտելիքներուն մարզը:

☆ **ԱՅՄԵՂՂԻՒՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Ձեր եռանդը պիտի աւելնայ, տնտեսական ձեր վիճակը գոհունակութիւն պիտի տայ ձեզի: Նոր պայմաններ եւ առիթներ պիտի ունենաք ձեր նիւթական վիճակը բարելաւելու:

☆ **ՇՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարէն 19 Փետրուար)

Ձեր բոլոր կարելիութիւնները ի գործ պիտի դնէք անսովոր կացութեան մէջ դուրս գալու համար: Եղէք շրջափակեց եւ յաւատեա, որպէսզի հասնիք ձեր նպատակին:

☆ **ՉՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)

Ձեր գործատեղիին մէջ անձ մը գաղտնիք մը պիտի փոխանցէ ձեզի: Բայց այս անձը, որմէ դուրս պիտի ելլէ գաղտնիքը, ինքը տակաւին լաւ տրամադրութիւն չունի կամ տեղեակ չէ հարցերուն հիշող ընթացքին: Ջգուշ եղէք:

# ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՏՈՆ / ՅՈՒՅԱՆՆԻԷՍ / ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԻՆ

## ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹԵԱՄԲ ՀԱՐՈՒՍՏ ՓՈՒՍՏՈՆ ՄԸ «ՏԵՅՐ ՔԱՄԱՐԻ ԱՄԱՌՆԵՐ»

Ամրան ընթացքին, Պալատիքի եւ Պէյթուտի կողքին, Լիբանանի տարածքին քիչ մը անէն շրջան իր տեղական մշակութային առօրեային թափ տալու եւ պրօսպերիտիւնը ներգրաւելու նպատակով կը կազմակերպէ յաճախ իր անունով ճանաչուած փառատօններ: Անոնցմէ մէկն է ժողովրդային բնոյթ ունեցող «Տէյր Քամարի ամառներ» փառատօնը, որ պիտի 5 Յուլիսին եւ պիտի շարունակուի մինչեւ 6 Սեպտեմբեր:



Քեան նուիրուած երեկոններ, ինչպէս նաեւ աշակերտական նկարչական ցուցահանդէսներ եւ մանուկներու յատուկ ձեռնարկներ: Փառատօնին ձեռնարկներուն կարեւոր մէկ մասին մուտքը պատ է, իսկ մնացեալը ունի շատ մատչելի մուտքի սակ:

Տէյր Քամարի փառատօնին իրաւաստուկ ձեռնարկներէն է «Գեղանկարչիչներու Օր»-ը, որուն այս տարի մասնակցեցան Լիբանանի վանապան շրջաններէն եկած 38 գեղանկարիչներ: Անոնք վեց ժամուան մէջ պետք է հանրութեան: Այս նպատակով ալ տեղի կ'ունենան շարժապատկերի համալսարանական ուսանողներու գործերու ցուցադրութիւններ եւ մրցանակաբաշխութիւն, պարի ու մնացածը կ'ընդհանրեն, իբրանանեան, արաբական ու արեւմտեան ժողովրդային երգերու, դասական երաժշտու-

Ստորեւ «Տէյր Քամարի ամառներ» փառատօնին յայտագրիչն մաս մը.

13 Յուլիս.- Մոն-մարթի երեկոյ, վայր՝ գիւղաքաղաքին հրապարակը

14 Յուլիս.- Երաժշտական երեկոյ, վայր՝ Ալ Միտան

19 Յուլիս.- Ասատ Բեւոյի նկարչական ցուցահանդէս եւ իբրանանեան աւանդական երգերու երգչախմբային ելոյթ, վայր՝ Սէրայ 20 Յուլիս.- «Լը տիալով տէ տիֆերանս» պարային ելոյթներ եւ «Լը սիլրէսիոն» մնացածը ելոյթներ, վայր՝ Սէրայ

ՀԵՌԱՏԵՍԻԼ

10:00.- Սապահո	20:30.- Պէսաք ուսարան	07:00.- Հայրուր
12:30.- Միւլիքի հոլ	21:30.- Քիչմ էլ նէս	07:20.- Առաջին ծրագիր
	00:00.- Երգահանդէս	08:30.- Մանրամասներ
13:00.- Մարուլ հանա		08:45.- Առաջին օգնութեան դասընթաց. Տուժածի տեղափոխում
14:00.- Եւրոնիւտ	ՄՈՒՍՈՒՔՊԱԼ	09:00.- Հեռուստատեսիայ «Սիտի կահարդան»
14:30.- Լուրեր	7:00.- Լուրեր	09:45.- Կէսգիշերային ձեւերընթաց
15:00.- Մըջուար	9:00.- Ալամ ալ սապահ	10:40.- Իմ սէր, իմ հաստ, իմ եկեղեցի
17:00.- Ֆիլմաշար		11:00.- Հայրուր
18:00.- Ազգային վիճակահանութիւն	13:00.- Ֆիլմ ինֆօ	11:20.- Բուպիքոն+
18:30.- Տընիա Հէք	13:05.- Նոթք լէնտինկ	12:00.- Լուր
19:30.- Արաք. լուրեր	14:00.- Անգլերէն լուրեր	12:05.- Երաժշտական ալիք
20:00.- Մոտելիս	14:20.- Ֆրանսերէն լուրեր	13:00.- Լուր
21:30.- Տեղական ֆիլմաշար	14:40.- Հայերէն լուրեր	13:05.- Ակունք (դասական երաժշտութիւն)
	15:00.- Լուրեր	13:25.- Երկնքից երեք հոլովակ ընկալ
22:00.- Տեղական ֆիլմաշար	15:30.- Արաբական ֆիլմաշար	13:35.- Ռիթմ եւ պլուզ
23:00.- Ամերիկեան ֆիլմաշար	16:30.- Թելեթապիլ	13:55.- Նոթատետր
	17:00.- Ըզդար ըզպար	14:05.- Երաժշտական ալիք
	17:30.- Արաբական ֆիլմաշար	15:00.- Հայրուր
	18:30.- Օրոճոպիլ	15:20.- «Արեւիկ»
	19:00.- Սինէ մաճալլէ	16:00.- Հեռուստատեսիայ «Սիտի կահարդան»
	19:30.- Մոնտիալի յատուկ յայտագիր	17:00.- Երկնքից երեք երեւան
	20:00.- Արաբերէն լուրեր	17:20.- Շրջադարձ
	20:30.- Բուստում	18:00.- Ալլուր
	մութահարիւրա	18:10.- Անցեալը ներկան է
09:30.- Քիլիսի	20:35.- Ալիալքա ստասաֆ	18:35.- Տուս-տուսիկ
10:30.- Քի է քի	21:30.- Պէսք սելըր	19:00.- Հայրուր
11:00.- Ուս քրնսս	22:30.- Նրա Տաքիւր	19:50.- Պետական պարտատուներ
11:30.- Քըլ մէյլէ այլէ	23:30.- Ամերիկեան ֆիլմաշար	20:00.- Բոհէմ
12:00.- Էմ. Թ. Վի. ափորթց		20:35.- Հայերը
12:30.- Էս. Էլ. Շի.		21:00.- Լուր
13:00.- Մարիմալ	ԷՆ. ՊԻ. ԷՆ.	01:05.- Ակունք (դասական երաժշտութիւն)
14:00.- ժուրնալ Ֆրանս 2	15:00.- Լուրեր	01:25.- Երկնքից երեք հոլովակ ընկալ
14:45.- Սի		

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն ԱՇԽԱՐՀ



## ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹԳՈՂԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՍԲ

## ՀԵՏԵԼԱՐՇԱԲ. ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՎԱԶՔ

## ԻՏԱԼԻՈՅ ՖՈՒԹԳՈՂԻ ԳԵՐԲԱԺԱԿԻ ԵՎ ԵՎԿԱՏՈՒՄԸ՝ 25 ՕԳՈՍՏՈՍԻՆ... ԼԻՊԻՈՅ ՄԵԶ

### Ո՞Վ ՊԻՏԻ ՅԱԶՈՐԴԵ ՌՈՓԵ ԼԵՄԵՐԻ

Ֆրանսայի ֆուտբոլի ֆեդերատիոնը երկ կայտարարեց երեք թեկնածուներու անունները, որոնք յոյս ունին ստանձնելու Ֆրանսայի ֆուտբոլի ազգային խումբին մարզիչի պաշտոնը՝ Ռոֆե Լեմեթի պաշտոնազրկումէն ետք:

Երեք թեկնածուներն են՝ Ֆրանսայի 21 տարեկանէն վար կրտսերներու ազգային խումբի մարզիչ Ռեմոն Տոմենէթ, Ճափոնի ազգային խումբի մարզիչ Ֆրիդիխ Թրուսիէ եւ Լիոնի մարզիչ Ժաք Սանթինի:

Ֆրանսական կարգ մը օրաթերթեր յիշեալ թեկնածուներուն անդրադառնալով հրապարակեցին հետեւեալ յայտարարութիւնները. «Տոմենէթ՝ առաջին դիրքի վրայ», ըսաւ. «Լ. Երիփ», մինչ «Լ. Փարիզիէն» ըսաւ. «Թրուսիէի նախընտրութիւնը հետզհետէ հող կը շահի»:

Ֆեդերատիոնին կարգ մը անդամները, ինչպէս նաեւ ազգային խումբին նախկին մարզիչ էմէ Ժաքէ յայտարարեցին, թէ Թրուսիէի մարզիչ նշանակումը բոլորովին սխալ պիտի ըլլայ, որովհետեւ ան բնաւ ծանօթ չէ ֆրանսական ֆուտբոլին, թէեւ 1989ին Ֆրանսայէն հեռանալէն ետք ան յաջողեցաւ յաջողութիւն արձանագրել Փղոսկրեայ Ափունքի, Հարաւային Ափրիկէի, Նիկերիոյ, Պուրթիկա Գաբոնի եւ վերջապէս Ճափոնի ֆուտբոլի ազգային խումբերուն հետ:

Շարժաթանկութիւն թեկնածուներուն թիւն էր հինգ, իսկ այժմ անոնց թիւը նուազեցաւ երեքի: Երկու նկատի չառնուած թեկնածուներն էին՝ Լը Հաւրի մարզիչ Ժան - Ֆրանսուա Տոմէթը եւ ՖԱՐ Ռապայթի (Մարոք) մարզիչ Ժան Թիկանա:

Հակառակ թեկնածուներուն, նոր մարզիչի նշանակման թուականը ցարդ կը մնայ անորոշ: Ֆրանսայի ֆուտբոլի ֆեդերատիոնի նախագահ Քլոտ Սիմոնէ առաջին անգամ յիշատակեց 26 Յուլիոսը: Ապա ան ըսաւ, թէ նոր մարզիչի նշանակումը տեղի պիտի ունենայ Յուլիս 14էն 22: Իսկ այժմ ան կ'ըսէ, թէ նոր մարզիչի նշանակումը տեղի պիտի ունենայ Կիպրոսի դէմ (Ներս - 2003ի գտում) տեղի ունենալիք մրցումէն առաջ (Սեպտեմբեր 7):

### ՕՆՍԵ ԶԱՐԵՑԱԲ ԺԱՄԱՅՈՅՑԻ ԴԵՄ ԽՄԲԱՅԻՆ ՄՐՑՈՒՄԸ

Ֆրանսայի հեծելադաշտի շրջափակումը, որուն հարկ հանգրուանը տեղի ունեցաւ երկ Էփերնէն Շաթո-Թիերի (67,5 քմ.), եղաւ ժամացույցի դէմ խմբային մրցում մը:

Սպանական Օնսե-Էրոսի խումբը հանդիսացաւ առաջին, արձանագրելով 1 ժամ 19 վայրկեան եւ 49 երկվայրկեան արդիւնք մը: 2րդ դիրքը գրաւեց Նու. Էս. Փոսթալ Սըրվիս (16" ուշացումով), իսկ 3րդ դիրքը՝ Սի. Էս. Սի. Թիսթալի (46" ուշացումով):



Իկոր Կոնգալէս Կալտեանո

Օնսէի արձանագրած այս յաղթանակը պատճառ դարձաւ, որ անոր հեծելաշարքին իկոր Կոնգալէս Կալտեանո, վերջին եօթ տարիներուն ընթացքին դառնայ առաջին սպանացին, որ կը հազնի դեղին շապիկը: Վերջին անգամ 1995ին էր, որ Միկէլ Ինտուրայն յաջողած էր գրաւել առաջին դիրքը:



Մարիո Զիփոլիցի

Ամերիկացի Արմսթրոնգի, որ գրաւեց երրորդ դիրքը, ըսաւ. «Բիչ մը անակնկալի դիմաց գտնուեցայ, բայց յուսալար չեմ»:

ՄՓՐԻՆԹԻ վարպետ Խոսեօ Մարիո Զիփոլիցի (35 տարեկան), որուն խումբը՝ Աքրուս եւ Սափոնէ չէր հաջողութեամբ մաս կազմելու Ֆրանսայի հեծելադաշտի շրջափակումը, յայտարարեց, թէ կը լքէ իր ասպարէզը: Ան իր ասպարէզին ընթացքին շահեցաւ 177 յաղթանակ:

Ուղիկայ օրերուն ընթացքին պիտի աչքի ընկնէ մանրամասնութիւններ հեծելադաշտի աշխարհէն իր հեռացման մասին:

Խոսեօ Մարիո Զիփոլիցի «Կալտեանո Սիլիո Սփոր» օրաթերթը անոր մասին անդրադառնալով ըսաւ. «Դժբախտաբար ան կը լքէ ասպարէզը, իր անհնէն լաւ օրերուն»:

Այսօր տեղի կ'ունենայ 5րդ հանգրուանը՝ Սուսոնէն Ռուան (198 քմ.):

Ստորեւ՝ 4րդ հանգրուանին արդիւնքները.

- 1.- Օնսե - Էրոսի 1 ժամ 19' 49"
- 2.- Նու. Էս. Փոսթալ Սըրվիս 16" ուշ
- 3.- Սի. Էս. Սի. Թիսթալի 46" ուշ
- 4.- Ֆասսա Պորթոլո 1' 30" ուշ
- 5.- Քոնֆիտիս 1' 44" ուշ
- 6.- Լիպանսո 1' 56" ուշ
- 7.- Տոմո-Ֆարմ Ֆրայթ 2' 12" ուշ
- 8.- Ռապայթ 2' 16" ուշ
- 9.- Քիմ-Քոսթա Պանթա 2' 19" ուշ
- 10.- Լամփրե-Տայրի 2' 21" ուշ
- 11.- Քիտի Ակրիթո 2' 28" ուշ
- 12.- Տեօթ Թելեքոմ 2' 47" ուշ
- 13.- Պոմոն 3' 13" ուշ
- 14.- Ալեգի 3' 15" ուշ
- 15.- Ֆե. Տե. Ժե. 3' 34" ուշ
- 16.- Լոթո-Ատեթ 3' 42" ուշ
- 17.- Ժան Տըլաթ 3' 43" ուշ
- 18.- Թաքոնի Սփոր 3' 45" ուշ
- 19.- Մափէյ-Քուիթ Սթիֆ 3' 49" ուշ
- 20.- Էուսթալթէլ 4' 22" ուշ
- 21.- Քրեվոյան 4' 24" ուշ

Ստորեւ՝ ընդհանուր դասաւորումը.

- 1.- Իկոր Կոնգալէս Կալտեանո (Սպանիա) Օնսե: 14 ժամ 51'
- 2.- Խոսեօ Պիլոթի (Սպանիա) Օնսե: 4" ուշ
- 3.- Լեոն Արմսթրոնգ (Մ. Ն.) Նու. Էս. Փոսթալ 7" ուշ
- 4.- Երկ Եսթալէ (Գերմանիա) Օնսե: 12" ուշ
- 5.- Ռոպերթ Զերաս (Սպանիա) Նու. Էս. Փոսթալ 25" ուշ

Խումբերու դասաւորում

- 1.- Օնսե: Էրոսի 44 ժամ 35' 46"
- 2.- Նու. Էս. Փոսթալ Սըրվիս 42" ուշ
- 3.- Սի. Էս. Սի. Թիսթալի 2' 09" ուշ
- 4.- Ֆասսա Պորթոլո 4' 53" ուշ
- 5.- Քոնֆիտիս 5' 06" ուշ

## ԹԵՆԻՍ. ԶՈՒՒՅԵՐԻՈՅ ԲԱՅ ՄՐՅԱՇԱՐՔ

### ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ՊԱՐՏՈՒԵՑԱԻ ՓԱԻԼԷՆ

Թեմիսի Ուիմպլերտին մրցաշարքի աւարտականին հասած արժանիքներու Դաւիթ Նալպանտեան երէկ Զուլցերիոյ թեմիսի բաց մրցաշարքի Ա. հանգրուանին 7-5 եւ 6-3 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք ռումանացի Անտրէ Փաւելէն, դուրս մնաց մրցաշարքէն:

Աշխարհի չորս կրան շրէմ մրցաշարքերէն ամէնէն հուշակալներէն՝ Ուիմպլերտին մրցաշարքին եօթ մրցում կատարած Նալպանտեան բաւական յոգնած ըլլալով՝ չկրցաւ լաւ արդիւնք արձանագրել Փաւելի դէմ, որ Բ. հանգրուանին պիտի մրցի Մարք Ռոսէթի դէմ (Զուլցերիա):

## ՀԵՏԵԼԱՐՇԱԲ

### ՈՒԼՐԻՆ ՊԻՏԻ ԶԼՔԷ ԱՍՊԱՐԷԶԸ



Եան Ուլրիս

Գերմանացի հեծելաշարքի Եան Ուլրիս, որ խոստովանած էր, թէ խթանիչ դեղեր գործածած է, վերջերս մեկնեցաւ արձակուրդի մը, որպէսզի հանգրուանայ եւ հոգեպէս պատրաստուի հեծելադաշտի աշխարհ վերադառնալու:

1999ին Ֆրանսայի շրջափակումի բաժանին տիրացած՝ Ուլրիս, այս տարի բացակայ է շրջափակումէն: Անցեալ Մայիսին ան ծուկնի վիրարութեամբ բուժուած էր:

28 տարեկան Ուլրիս իր համակիրներէն խնդրեց համբերել, որովհետեւ ինք երբեք մտադիր չէ վերջ դնելու իր ասպարէզին, այլ կ'ուզէ նորանոր յաղթանակներ տօնել:

Ուլրիս, միակ գերմանացին է, որ շահած է Ֆրանսայի շրջափակումը, շատ հաւանաբար մէկ տարի կատարելու ինքնիշխան դեղեր գործածելուն համար, սակայն իր խումբը՝ «Թեյթոմ» մտադիր չէ որեւէ ձեռնարկ անելու:

Գերմանացին անցեալ շաբաթ մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտարարեց, որ լուր անգամ չունի, թէ ինչ դեղ գործածած է եւ ինք բաւական ցնցուած է ինչ դեղ գործածած արդիւնքները, որոնք յայտնաբերուած են խթանիչ դեղերու գործածութիւնը:

### ՕԼԻՎԵՐ ՔԱՆԻ ՆԿԱՏԱՄԲ ՆԱԽԱՆՉ ԵՒ ԱՅԼԱՄԵՐԺՈՒԹԻՒՆ

Գերմանիոյ խմբապետ Օլիվեր Քան, որ հանդիսացած էր առաջին բերդապահը, որ կ'արժանանայ Ֆի-ՖԱԻ «Ոսկեգնդակ»ին, սկսած է «Թշնամիներ շահիլ» Պոնտրիկային մէջ: Պոնտրիկայի իր մրցակիցները ընդգծած են իր վայելած մեծ ժողովրդականութիւնն եւ կ'ըսեն, թէ Քան պարզապէս լաւ բերդապահ մըն է եւ իրենք ալ պէտք է հաւատարմապէս գնահատուին:

33 տարեկան Քան, որուն մէկ աններելի սխալի պատճառով Ռոնալտո նշանակած էր Պրազիլի առաջին կողմ, գերմանացի համակիրներուն կողմէ դիմաւորուած է իբրեւ հերոս մը:

Այս մէկուն ակնարկելով, վերջերս Պրեմիերի նախկին բերդապահը եւ ներկայիս Շալթ 04ի միացած Ֆրէնք Ռոսթ ըսաւ. «Ձեմ հասկնար ինչո՞ւ Քանը հերոսի մը վերածած են: Եթէ ան ձախողի գնդակ մը կասեցնելու, իր իրազորումը անկարելի կը նկատուի, իսկ անդին եթէ ուրիշ բերդապահ մը նոյն սխալը գործէ, յաւիտեան վնասները կը կրէ: Քանը բացառիկ բերդապահ մըն է, իսկ մենք անպէ՛ տը...»:

Վոլֆսպուրկի բերդապահ Քլոուս Ռէյթմայրը նոյնանման կարծիք մը յայտնեց Քանի մասին:

Քան «Ոսկեգնդակ»ին տիրացած էր ստանալով բուլեներուն 25 առ հարիւրը, մինչ պարագիցի Ռոնալտո ստացած էր 21 առ հարիւրը եւ գրաւած էր երկրորդ դիրքը:

### ԱՍՈՒՆԱՍՕ Ա. ԷՍ. ՌՈՍԱՅԷՆ ՄԻԱՅԱԻ ՌԷԱԼ ՊԵՏԻՍԻ

Անցեալ շաբաթ, Պրազիլի միջնապահ Մարքոս Ասունասո Ա. Էս. Ռոման լքեց եւ միացաւ Ռէալ Պետիսի ակումբին:

Ըստ սպանական «Մարքա» օրաթերթին, 25 տարեկան պրազիլցին 3 տարուան պայմանագրութիւն մը ստորագրեց սպանական ակումբին հետ: Փոխանցման սակը պաշտօնապէս չյայտարարուեցաւ, սակայն կարգ մը աղբիւրներ հաստատեցին, որ փոխանցումը արժան է մօտ 6,34 միլիոն տոլար:

Ասունասո, որ մաս կազմած է Սանթոսի, Ֆրանկոյի եւ այժմ Ա. Էս. Ռոմանի, վերջերս յայտարարած էր, թէ կ'ուզէ միանալ խումբի մը, ուր միշտ իբրեւ հիմնական մարզիչ նկատուի անուրի:

Այսպիսով սպանացի Ալֆոնսոյէն ետք, Ասունասո հանդիսացաւ 2րդ մարզիչը, որ միացաւ անցեալ եղանակին 6րդ հանդիսացած Պետիսին:

### ՊԻԵԼՍԱ ԿԸ ՆԿԱՏՈՒԻ ԱՐԺԱՆԹԻՆԻ ԶԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՄԻԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Տիէկօ Մարատոնայի հեռանալէն ետք, Մարսելի Պիելսա եղաւ վերջին «զոհ», որ ձախողեցաւ իբրեւ մարզիչ Արժանթինը հասցնել Մոնտիալի բաժանակին:



Մարսելի Պիելսա

Մարատոնայ նախապէս Արժանթինը առաջնորդած էր 1986ի Մոնտիալի բաժանակին եւ 1990ի աւարտականին: 1994ին Մոնտիալին առաջ, սակայն, ան դուրս դուրսեցաւ ինքնիշխան գործածութեան յանցանքով:

Պիելսա 2002ի Մոնտիալի «ոսկի» առիթ մը ունէր Արժանթինը վերադարձնելու իր փառքի օրերուն, սակայն ան արձանագրեց 40 տարուան ամէնէն ծանր եւ ամօթալի արդիւնքը, հակառակ լաւ խումբ մը ունենալուն:

Արժանթին այս տարուան Մոնտիալին միայն 4 կէտ հաւաքելով՝ դուրս մնաց, մինչ 40 տարիներ առաջ, Չիլի մէջ ան միայն մէկ կէտ հաւաքած էր:

Շատերու համաձայն՝ Արժանթին գերութեամբ հասաւ Մոնտիալի աւարտական հանգրուան եւ այդ պատճառով, երբ Պիելսա դժուարութեան առջեւ գտնուեցաւ՝ չկրցաւ անմիջական դարձան մը գտնել եւ դուրս մնաց Մոնտիալին:

Պիելսա նախապէս ձախողած էր նաեւ Քոփա Ամբրիջայի ընթացքին: Ան 1999ին միայն քառորդ աւարտական հասցուցած էր Արժանթինը, իսկ 2001ին չէր մասնակցած այդ մրցաշարքին:

Մեկնաբան Ուուս Սասթրիին Արժանթինի ձախողութիւնը վերագրեց խաղաճանաչութեան, նկատի ունենալով, որ անոնց մեծամասնութիւնը մաս կը կազմէ եւրոպական ակումբներու:

Ֆրանսացի Միչէլ Փլաթինի Արժանթինի ձախողութեան պատճառը նկատեց այն իրողութիւնը, որ մարզիկները ազատութիւն չունին դաշտին վրայ, այլ ստիպուած են խմբի կատարելու ինչ որ մարզիչը կը պահանջէ եւ այդ մէկը կ'անդամալուծէ կարգ մը մարզիկներ:

### ԱԼՄԵՅՏԱ ՓԱՐՄԱՅԷՆ ՄԻԱՅԱԻ ԻՆԹԵՐԻ

Արժանթինցի միջազգային միջնապահ Մարտիա Ալմէյտա երէկ լքեց Փարման եւ միացաւ Ինթեր Միլանի, երեք տարուան պայմանագրութիւն մը ստորագրելով խումբին հետ: Ըստ երկու ակումբներուն միջեւ կնքուած համաձայնագրին՝ Ինթերի յետսպահ Վրաթիլա Կրեթօ (Սլովաքիա) կը մեկնի հակառակ ուղղութեամբ:

28 տարեկան Ալմէյտա յառաջիկայ երկուշաբթի օր Ինթերի հետ պիտի սկսի իր փորձերուն. ան այժմ մէկ իսկ լաւատես է խումբին ապագայով եւ կ'ըսէ, թէ 2002-2003 եղանակին Ինթեր վերջ մը պիտի զնէ տիրոսին 13 տարուան իր սպասումին եւ պիտի հանդիսանայ իտալիոյ ախոյան:

Ռիվեր Փլէյթի (Արժանթին) մաս կազմելէ ետք, Ալմէյտա ժամանեց Սպանիա, ուր մէկ եղանակ մաս կազմելէ ետք Սելիլլայի, 1997ին միացաւ Լացիո Ռոմայի: 2000ին ան լքելով Լացիո Ռոման, փոխանցուեցաւ Փարմայի, մինչ Փարմայի մարզիչ արժանթինցի Հեռան Քրեսփօ մեկնեցաւ հակառակ ուղղութեամբ:

Այսպիսով, Ալմէյտա կը դառնայ չորրորդ արժանթինցին, որ կը միանայ Ինթերի, յետսպահ Նեյսոն Վիվասէն եւ միջնապահներ Ուալիէ Զանթթինէն եւ Անտէրա Կուլիբէրիսիի խմբին: Ինչպէս, թէ Իտալիոյ ֆուտբոլի փոփոխութեան (Քալչիո) 2002-2003 եղանակը կը սկսի յառաջիկայ Սեպտեմբեր 1ին: Սակայն, յառաջիկայ ամիս Ինթեր իր մասնակցութիւնը պիտի բերէ «Չեմփիլըն Լիկ»ի գտումի մրցումներուն:

### ԿԻՊՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ ԶՈՂ ԳՆԱՅ ՈՒՂՂԱԹԻՈՒ ԱՐԿԱՑԻ ՄԸ

ՆԻԿՈՍԻԱ, 10 (ՌՈՅԹԸՐԸ)։- Կիպրական բանակին հրամանատարն ու բարձրաստիճան քանի մը պիտուրականները պոհ գացին ուղղաթիռի արկածի մը, ռապիդափորձի մը ընթացքին, յայտնեց պաշտպանութեան նախարարութիւնը։

Զօրավար Էվանկելոս Ֆլորաքիս, օդուժի հրամանատար Սթիվիանոս Տեմենակաս եւ երեք սպաներ սպանուեցան, երբ իրենց ուղղաթիռը ջախջախուեցաւ ցամաք գետի մը հունին մէջ։ Արկածը պատահած է արեւմտագէն առաջ, արեւմտեան շրջանի Փաֆոս քաղաքին մօտ։

### ԻՐԱՆՅԻ ԿՐՕՆԱԽՈՐ ՄԸ ԿԸ ԲՆՆԱԴԱՏԷ ԱՅԱԹՈՂԼԱ ԽԱՄԵՆԷԻՆ

ԹԵՀՐԱՆ, 10 (ՌՈՅԹԸՐԸ)։- Իրանցի բարձրաստիճան կրօնական մը աննախընթաց յարձակողական մը շղթայագերծած է քաղաքական, ընկերային եւ տնտեսական անարդարութեան դէմ եւ յատկապէս թիրախ ընտրած է երկրին ամէնէն ուժեղ անձնաւորութիւնը՝ հոգեւոր գերագոյն ղեկավար Այաթոլլա Ալի ինձնէնէին։

Բարեկարգչական նախագահ Մոհամէտ ինձնէնէին հետեւողներէն՝ Այաթոլլա Ճալալեօտին Թահերի, այդ արտայայտուածները ունեցած է հրաժարական նամակի մը մէջ՝ իրեն իսֆահահանի Ուրբաթ օրւան աղօթքին հովանաւոր։

Այն յատկապէս քննադատած է պետութեան վիճակն ու պահպանողականները, որոնք կը խափանեն ինձնէնէին ծրագրերին գրեթէ բոլոր կէտերը։

### ԹՈՒՐԲԻՈՅ ՄԷՉ ՀԱԿԱՔԻՒՐՏ ԱՐՇԱԻԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

ՏԻՍՐՊԵՔԻՐ, 10 (ՌՈՅԹԸՐԸ)։- Թրքական ոստիկանութիւնը յայտնած է, թէ հարաւ-արեւելեան Թուրքիոյ մէջ Զորքաքթի օր ձերբակալած է շուրջ 30 անձեր, որոնք կը նշէին քիւրտ քաղաքական անձնաւորութեան մը մահուան 10րդ տարեդարձը։

Անշտաւ այլ դէպքի մը ընթացքին, արեւելեան Մուշ քաղաքին մէջ իշխանութիւնները ձերբակալած են որմնադիր մը, որ ամբաստանուած է քիւրտ պիւնտիստներու հետ գործակցելու յանցանքով, որովհետեւ ան փորագրած է աստղով օժտուած կիսամարտի մը՝ քիւրտ ըմբոստի մը գերեզմանին համար։

Թուրքիա պէտք է իր 12 միլիոն քիւրտներուն մշակութային իրաւունքները ընդարձակէ՝ հասնելու համար Եւրոպական Միութեան քաղաքական չափանիշներուն, ինչ որ կենսական է եթէ անիկա կ'ուզէ իրագործել անդամակցութեան գծով բանակցութիւններու սկսելու իր երապը։

Շրջանային մայրաքաղաք Տիարպէքիի մէջ ոստիկանութիւնը ցրուած է հաւաք մը՝ վետաթ Ալտինի գերեզմանին շուրջ։ Այսին, որ անդամ եղած է Ժողովուրդին Աշխատատեղական Կուսակցութեան (ՀԷՓ), 1991ին առեւտրական եւ սպանուած է։

ՀԷՓի գործունէութիւնը արգիւտուած է 1993ին, այն ամբաստանութեամբ, թէ անիկա պետութեան ամբողջականութեան վտանգ կը սպառնայ։

Այս տարեկանի պիտի Մարդկային Իրաւանց Եւրոպական Ատուանը Թուրքիոյ դէմ վճիռ արձակած է ՀԷՓի հանդէպ անոր կեղծումներին պատճառով։

ՀԱՏԷՓ, որ ՀԷՓի յաջորդն է, ներկայիս նույնպէս փակման վտանգ կը դիմագրաւէ՝ ենթադրաբար ՔԱԿի հետ կապեր պահպանած ըլլալու յանցանքով։

Միւս կողմէ, ոստիկանութիւնը ձերբակալած է որմնադիր Մուսթաֆա Քորքմապը, որ Զիւլֆի-Ալլայի կիսամարտի փորագրած է։ Այսպէս ՔԱԿի անդամ մը եղած է եւ 1998ին սպանուած՝ թուրք պիւնտիստներու հետ բախու մի մը ընթացքին։

Ինչ կը վերաբերի փորագրուած աստղին, անոր հայրը ըսած է, թէ քաղաքական նպատակներով չէ, որ փորագրուած է անիկա, այլ 22 տարեկան Զիւլֆիի մահը նկատուած է իբրեւ «աստղի մը կորուստ»։

Աստղը կը գործածուի կարգ մը քիւրտ պիւնտիստներու կողմէ, ներառեալ ՔԱԿի, իբրեւ քաղաքական խորհրդանիշ։

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՉ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՕԹԱՆԻ ՌԱԶՄԱՓՈՐՁԵՐՈՒՆ ԿՐՆԱՅ ՄԱՍՆԱԿՑԻԼ ՆԱԵՒ ԹՈՒՐԲԻԱ

Կ'ԸՍԷ ՆԱԽԱՐԱՐ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ  
Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան լրագրողներու հետ հանդիպումի մը ընթացքին յայտարարած է, որ բացահայտուած չէ, որ թրքական բանակին զօրաբաժինները մասնակցին ՕԹԱՆԻ «Համագործակցութիւն Յանուն Խաղաղութեան» ծրագրի ծիրէն ներս 2003ին Հայաստանի մէջ կայանալիք ռազմափորձերուն։

Նախարարը յայտնած է, որ ռազմափորձերուն թրքական ուժերու մասնակցութիւնը ոչ մէկ վտանգ կը ներկայացնէ։ «Ասոր կը համոզուիք, երբ անձամբ ականատես ըլլաք ռազմափորձերուն», աւելցուցած է Սերժ Սարգսեան։

### ՀԱԿԱՌԱԿ ՊԱՂԵՍՏԻՆԵՒԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

### ԼԱՐՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՅԱՄԵՆԱՅ ԵՐԿՈՒ ԿՈՂՄԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ

Կազա - Իսրայէլ սահմանին վրայ պաղեստինցի զինեալներ կրակ բացին Իսրայէլացիներու գործընթացին վրայ։ Փերէզ երկօրեայ նիստերով հանդիպում ունեցաւ հովութեան շարժումները յարձակողական շարժումները, որ Իսրայէլացիները վերաւերելու փերէզմ Շալոմ շրջանին մէջ, կազայէն դուրս։ Սակայն պաղեստինցի ականատեսները յայտնեցին, որ միջադէպը տեղի ունեցած է Կազայի մէջ։

Կազայի միջադէպը վերստին սրեց լարուածութիւնը պաղեստինցիներուն եւ Իսրայէլացիներուն միջեւ, հակառակ անոր որ այս շաբթուան ընթացքին հանդիպում տեղի ունեցած էր պաղեստինցի եւ Իսրայէլացի բարձրաստիճան պաշտօնատարներու միջեւ։ Հանդիպումը լաւատեսութիւն ներշնչած էր, որովհետեւ չորս ամսուան ընթացքին առաջին անգամ ըլլալով բարձրաստիճան պաշտօնատարներ կը բանակցէին Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի անգամ անուղղակի ձեւով ողջունած էր արտաքին գործոց նախարար Շիմոն փերէզի ունեցած հանդի-

պումը, դիտել տալով, որ «պատուհան մը» բացուած է խաղաղութեան գործընթացին վրայ։ Փերէզ երկօրեայ նիստերով հանդիպում ունեցաւ պաղեստինցի բարձրաստիճան պաշտօնատարներուն հետ, որոնց կարգին էին նախարարները։ Երկու կողմերն ալ թէեւ հաստատեցին, որ հանդիպումները բանակցութիւններու համագործընթաց են, որ հանդիպումները արգիւնաւէտ ըլլան, որովհետեւ չի բաւարարուած նկատել Երբ անոր աւարտին շօնափելի արգիւնք պիտի չենուստուր։ Ուրախութեամբ կը խօսէր Երուսաղէմի մէջ Փերէզի հետ ունեցած տեսակցութեան աւարտին։

Մինչ այդ, Միջին Արեւելի խաղաղութեամբ զբաղող միջազգային քառեակը կը պատրաստուէր հանդիպում մը ունենալու Լոնտոնի մէջ։ Քառեակը կը բաղկանայ Միացեալ Նահանգներէն, Եւրոպական Միութենէն,

Ռուսիայէն եւ ՄԱԿէն։ Լոնտոնի հանդիպումին նպատակն է դրամական օժանդակութիւն ապահովել պաղեստինեան իշխանութեան բարեկարգումներու ծրագրերէն։

Միւս կողմէ, Երուսաղէմի Քուլտուր համալսարանին նախագահը՝ Սարի Նուսայպէ երէկ ըսաւ, որ պիտի դիմէ Իսրայէլի հանրային ապահովութեան նախարարութեան, որպէսզի յետո կոչէ համալսարանին վարչական բաժինին գրասենեակները փակելու որոշումը, որ գործադրուի Երուսաղէմի գործուած էր Երեքշաբթի օր։ Իսրայէլ կ'ըսէ, որ գրասենեակները կ'օգտագործուին պաղեստինեան իշխանութեան կողմէ։ Իսրայէլ պաղեստինեան իշխանութեան կ'արգիւնէ որեւէ գործունէութիւն ունենալ Արեւելեան Երուսաղէմի մէջ։ Նուսայպէ հերքեց, որ գրասենեակները կ'օգտագործուին իշխանութեան կողմէ, ընդգծելով, որ հոն պարզապէս համալսարանին վարչական աշխատանքները տեղի կ'ունենան։

● ԵԳԻՊՏՈՍԻ նախագահ Հիւսնի Մուպարաբ երէկ հանդիպում ունեցաւ Մէնուսական Արաբիոյ արտաքին գործոց նախարար Մէնու Ճալալ իշխանին հետ, քննարկելու համար Միջին Արեւելի խաղաղութեան գործընթացին առնչուող հարցեր։ Եգիպտոսի պաշտօնական լրատու գործակալութիւնը յաւելեալ մանրամասնութիւններ չփոխանցեց տեսակցութեան մասին։

● ԳԵՐՄԱՆԻԱ պատրաստած է թղթածրար մը, ուր կը ներկայացնէ քայլերը եւ ժամանակացուցը Իսրայէլի եւ պաղեստինցիներուն միջեւ հաստատուելիք խաղաղութեան։ Արտաքին գործոց նախարարութեան կողմէ հրապարակուած յայտարարութիւնը կը նշէր, որ առաջարկուած ծրագիրը հիմնուած է Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշի արտայայտած տեսակցութեան վրայ։

● ՏԱՅՐԱՑԵՂ կրօնական Շաս Կուսակցութեան նախկին ղեկավար Արիէ Տերի, որ երեք տարի բանտարկութեան դատաւարուած էր, ներում ստանալով մէկ տարի առաջ աքաղաքուած էր Երուսաղէմէն։ Տերի բանտարկուած էր փտածուցութեան յանցանքի համար։

(ՌՈՅԹԸՐԸ)

### ՕՍԿԱՆԵԱՆ – ՇՈՒԻՍԸՐ ՄԱՍԼՈՅ ՄԻԱՑԵԱԼ ԱՍՈՒԼԻՍ

Եւրոպական խորհուրդի ընդհանուր քարտուղար Վալթեր Շուիմըր, աստիճանագրեց Հայաստան կատարած իր երկօրեայ աշխատանքային այցելութիւնը, երէկ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի հետ տուաւ մամուլի ասուլիս մը։

«Հայաստան յուրջ պարտաւորութիւններ ստանձնած է Եւրոպական խորհուրդին անդամակցելով, եւ ներկայիս անոնց իրականացման գործընթացը կը շարունակուի։ Այս պատճառով, Եւրոպական խորհուրդի ընդհանուր քարտուղարի այցելութիւնը առիթ կու տայ գնահատելու, թէ ի՞նչ կատարուած է մինչեւ այսօր, ի՞նչ թերացումներ արձանագրուած են, ո՞ր մարզերուն մէջ ետ մնացած ենք եւ ինչպիսի՞ յատկացումներ կ'ակնկալուին», ըսաւ Օսկանեան։ Ան տեղեկացուց, որ Շուիմըրի հետ քննարկումները կ'երկարացած են երեք ուղղութիւններու վրայ։ Հայաստանի ստանձնած պարտաւորութիւնները եւ անոնց կատարման գնահատականները, շրջանային խնդիրները եւ Լեռնային Ղարաբաղի տագնապը։

Վալթեր Շուիմըր իր կարգին դիտել տուաւ, որ Հայաստան պարտաւորութիւններու իր կատարման ընթացքով ցոյց կու տայ, թէ կը ցանկալի իսկապէս դառնալ Եւրոպական ընտանիքի լիիրաւ անդամ։ Ան յատկապէս անդրադարձաւ Հայաստանի մէջ մահապատիժի ջնջման անհրաժեշտութեան եւ ընտրական մարմիններու գործունէութեան։

Նախարար Օսկանեան ասուլիսի ընթացքին նշեց, որ Վալթեր Շուիմըրի ներկայացումը է Լեռնային Ղարաբաղի տագնապի վերջնական լուծումը, տագնապի ներկայ իրավիճակը, եւ անոր լուծման հեռանկարները։ Շուիմըր իր կարգին տեղեկացուց, որ Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի քաղաքական յանձնաժողովի կողմէ Լեռնային Ղարաբաղի տագնապի գծով վեկուցող նշանակուած թերի Տէյվիսի հաւանաբար շրջան այցելէ յառաջիկայ շաբաթ, իսկ անոր վեկուցումը պատրաստ պիտի ըլլայ 2003ին։ Եւրոպական խորհուրդի ընդհանուր քարտուղարը նաեւ ըսաւ, թէ ըստ երեւոյթի երկու կողմէն ալ ժողովուրդը կ'ընտելանայ Լեռնային Ղարաբաղի տագնապի ներկայ իրավիճակին, ինչ որ, իր կարծիքով, դրական կարելի չէ համարել։

Վալթեր Շուիմըր ասուլիսին ընթացքին նաեւ անդրադարձաւ Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի քննիչ յանձնաժողովի անդամ, Ալբերտ Գլազիանի վեկուցող Մարտին Կրոսի հասցեյին Պարտէն կատարուած ամբաստանութիւններուն, եւ յատկապէս Ալբերտին արտաքին գործոց նախարար Վալթեր Շուիմըրի այն յայտարարութեան, թէ «անբարձրալի տարր» նկատուելով՝ Կրոսի մուտքը Ալբերտին կրնայ արգիւտել։

Այս գծով Շուիմըր ըսաւ. «Եւրոպական խորհուրդի անդամ որեւէ երկիր իրաւունք չունի ներդրուելու իր քաղաքական վեհաժողովի քննիչ յանձնաժողովի իր վեկուցողը։ Գոյութիւն ունի համապատասխան յանձնաժողով, որուն պարտականութիւնն է որոշել այս կամ այն երկրին վեկուցողը»։

Հայաստան – Իրան համագործակցութեան անդրադատարան, Եւրոպական խորհուրդի ընդհանուր քարտուղարը ըսաւ, թէ կ'ողջունէ այդ համագործակցութիւնը, որովհետեւ նման յարաբերութիւններէ կախեալ է ժողովուրդներու բարեկամութիւնը։

### ԱՇԽԱՐՀԻ 10...

Շարունակուած՝ 7րդ էջէն

Միացեալ Նահանգներու հզօրագոյն «պիզնէս վումըն»՝ Ապիլէյլ ձոնսըն, հինգերորդ կը հանդիսանայ 8,6 միլիառ տոլարով։

6րդ դիրքը կը գրաւէ Նիկա Ուանկ՝ 3,7 միլիառ տոլարով։

Հոլանտայի Պէթթիս իշխանուհին 7րդ դիրքը կը գրաւէ 2,5 միլիառ տոլարով։

Ամբողջ Հովիվուտի ամէնէն հարուստ կինը՝ Օփրա Ուելչֆրի, 8րդ դիրքը կը գրաւէ մէկ միլիառ տոլարով։ Օփրա Ուելչֆրի «Թր Ծօ»-երը մեծ ժողովրդականութիւն կը վայելէ եւ կը սփռուին աւելի քան 107 երկիրներու մէջ։

Անգլիոյ իլիզապէթ թագուհին մեծահարուստ կիներու ցանկին 9րդ դիրքը կը գրաւէ 330 միլիոն տոլարով։

Ցանկին վերջին դիրքը կը գրաւէ երգչուհի Սելին Տիոն՝ 140 միլիոն տոլարով։

### ՆՈՒԱՉ ՀԱՐՈՒՍՏ ԱՅԼ ԿԻՆԵՐ...

Պրիմի Սփիրթ 38,5 միլիոն տոլար թիւն Թըրնըր 31 միլիոն տոլար Ճուլիա Ռոպըրթս 18,9 միլիոն տոլար Հելըն Հանթ 15,3 միլիոն տոլար Ճենիֆեր Անիսթըն 15,3 միլիոն տոլար Ճենիֆեր Լոփթզ 14,4 միլիոն տոլար Մանտրա Պուլթը 11,4 միլիոն տոլար Վիլյոն Ուելչմո 10 միլիոն տոլար Աննա Բուրնիքովա 10 միլիոն տոլար

Բայց չմոռնանք այն առածը, որ կ'ըսէ՝ «Դրամը կը քայտկուրիս չի բերեր...»

**National**  
THE PEAK OF JAPANESE TECHNOLOGY  
NEW DESIGN 2002  
Solar Refreshing Filter  
This long-lasting solar refreshing charcoal filter absorbs tobacco smoke and other contaminants that can cause room odors.  
Catechin Filter  
Catechin plant is well known for its medicinal effects against Cancer, virus, allergy, cholera, flu, and dust particles.  
For more info, call: Tutunjian Corp. S.A. (04) 712129/130 - 711967, (03) 243203 Fax: (04) 712177 E-mail: TTC@cyberja.net.lb